20 ՅՈՒԼԻՍ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 133(4752)

Azg Ազգ

ISSN: 1829-1651

Ժողովրդի խնդիրները երկխոսությանը կաղ չունեն

ՄԱԲԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Առաջին երկխոսական հանդիպումը, չնայած լրագրողների բացակայությանը, մի շարք հետեւությունների տեղիք տվեց: Հենց ա՛յդ հետեւություններից են երեւի վախենում կողմերը, որ երկուսին էլ ձեռք է տալիս փաստորեն փակ, առանց լրագրողների հանդիպումը: Երկխոսողների հետ զրույցներից հասկանալի դարձավ, որ արտահերթ ընտրությունների մասին պնդող ՀԱԿ-ին իշխանական կողմում լսում են (ճիշտ է, առայժմ ասում են՝ լսում են, որ իբր արտահերթ ընտրությունների հարցում հակառակում համոզեն), նշանակում է ՀԱԿ-ի առաջարկած գլխավոր հարցի՝ արտահերթի գաղափարից կարող են իշխանական կողմում կամաց-կամաց այլեւս չխրտնել, ինչպես մեկ-երկու ամիս առաջ, ու ոնց որ արդեն հիմա էլ այնքան չեն խրտնում:

Մենք, այս կամ այն կողմի մամուլի նման, ոչ մի խնդիր չունենք երկու կողմից էլ ցանկալին իրականի տեղ ներկայացնելու, այնպես որ հանգիստ իշնենք մեր դատողությունների երիվարը: Այսպիսով՝ ի՞նչ խնդիր է լուծվում երկխոսությամբ: Քանի որ երկխոսական առաջին հանդիպումն իրողություն է՝ հանգիստ, առանց վախենալու, որ կխանգարենք պետականաշեն, քաղաքական նոր մշակույթ ձեւավորող դարակազմիկ իրադարձությանը, կարող ենք մեր ենթադրությունները ներկայացնել: Այսպես, այս երկուերեք ամիսներին, երբ սկիզբ առավ երկխոսության հնարավորության մասին խոսուզրույցը, այլեւս չէր լսվում կամ շատ նվազ էր լսվում ընդդիմադիր մյուս միավորների ձայնը: Եթե անգամ լսվում էլ էր՝ հետաքրքրություն չէր առաջացնում: Երկրորդ՝ մարդկանց ենթագիտակցությունն ակամա հրահանգն ընդունել էր, որ երկխոսում են՝ սպասենք-տեսնենք դրանից ի՞նչ է դուրս գալու:

Տես էջ 2

Զինվորը բռնության չի ենթարկվել

Երեկվա համարում «**Ազգը**» փոխանցել էր Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի հաղորդագրությունը, ըստ որի իրենց գրասենյակ էր դիմել Վայքի Խաչիկ գյուղի զորամասի 4-րդ գումարտակի զինծառայողի ծնող Ռ. Հովհաննիսյանը եւ հայտնել, որ գումարտակի ինչ-որ սպա որդու մոտ հեռախոս գտնելով՝ վերցրել է այն եւ հրամայել որպես պատիժ կատարել փորի վրա վարժություններ: «Երբ զինվորը հրաժարվել է կատարել սպայի հրամանները», վերջինս նրան ենթարկել է բռնության եւ այլն: Սակայն երեկ ՀՀ ՊՆ մամուլի քարտուղար Դավիթ Կարապետյանը մեկնաբանեց իրավիճակը: Ըստ Կարապետյանի՝ այս տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը. «Իրականում տեղի է ունեցել հեռեւյալը. շարային Ռաֆիկ Հովհաննիսյանին արգելվել է օգտագործել իր բջջային հեռախոսը, քանի որ նա իրավունք չունի կրել անձնական հեռախոս, եւ կարող էր օգտագործել միայն դասակին պատկանող եւ այնտեղ առկա բջջային հեռախոսը: Իսկ նրա նկատմամբ սպայի կողմից բռնություն գործադրելու մասին լուրերի տարածումը պարզապես ապատեղեկատվություն է եւ արժանի է համապատասխան հանրային գնահատականի»:

Հ. Ա.

«Երկու գլուխ մի կաթսայում չի եփվի»

Ադրբեջանի բարձրագույն ռազմական ուսումնարանի մի խումբ սպաներ անանուն նամակ են հղել «Ենի մուսավաթ»-ի խմբագրություն: Դա նրանց երկրորդ դիմումն է նույն լրատվամիջոցին: Այս անգամ սպաները բողոք են հայտնել, որ պաշտպանության նախարարությունում «բարձր պաշտոն են զբաղեցնում էթնիկները»: Խոսքը ոչ ադրբեջանցիների մասին է, որոնք, նամակի հեղինակների կարծիքով, չեն կարող «ազգի թուրքերի հայրենասիրությունն ունենալ»: Ռազմական ուսումնարանի սպաները խիստ քննադատության են ենթարկել ՊՆ մամլո խոսնակ Էլդար Սաբիրոլլուին եւ նրան համարել մեկը, որ «երբեք զինվորական ծառայություն իսկ չի անցել, ավարտել է նախադպրոցական կրթության եւ մեթոդիկայի բաժինը, բայց 4 տարում 3 անգամ աստիճանի բարձրացում է ունեցել՝ դառնալով գնդապետ»:

Ավելի վաղ Սաբիրոլլուն «ոչ տղամարդկային» էր որակել այն սպաների վարքը, որ «չեն համարձակվում հրապարակել իրենց անունները, այլ պատի հետեւից են խոսում»: Ուսումնարանի սպաներն այդ առթիվ ասում են. «Մի քանի օր առաջ Բեյլագանի զորամասի սպաները տեսադիտում էին հղել գերագույն գլխավոր հրամանատարին: Եվ ի՞նչ: Այսօր բեռական գործ նրանց դեմ է հարուցվել: Սա՞ է ՊՆ «տղամարդկությունը»: Մենք դեռ ադրբեջանական ժողովրդին կարող ենք պետք գալ, դրա համար էլ թաքցնում ենք մեր ինքնությունը»: Այնուհետեւ «Ենի մուսավաթ»-ին դիմած զինվորականները մեկ առ մեկ թվարկում են այն հողատարածքները, որ նախկինում պատկանել են ՊՆ-ին, բայց հետագայում Սաֆար Աբիեւի կողմից կամ յուրացվել եւ դարձել են «էլիտար շինարարության հարթակ, կամ վաճառվել»:

Նրանց հաշվարկներով, պաշտպանության նախարարը վերջին տարիներին միայն Բաքվում սեփականացրել կամ վաճառել է 100 հեկտար տարածք: «Էլ չենք խոսում, թե շրջաններում նա ինչքան հող է յուրացրել», գրում են անանուն սպաներն ու ավելացնում. «Շատ զորամասերի ուսումնավարժական տարածքներում այսօր ՊՆ պաշտոնյաները եւ զորամասերի հրամանատարները ցորեն են ցանում»: Սպաները գրում են նաեւ, որ Սաֆար Աբիեւը «վերացրել է ՊՆ առեւտրի վարչությունը, որպեսզի բոլոր ծառայողները զրկվեն էժան ապրանք գնելու հնարավորությունից»: Նրանց ասելով, փոխարենը «պաշտպանության նախարարը բանակի պարենային մատակարարման մրցույթներում իր սեփական կամ մերձավորների հիմնադրած առեւտրական կազմակերպություններին է հաղթող ճանաչում: Նայեք, թե որտեղի՞ց եւ ի՞նչ որակի սննդամթերքներ է ստանում բանակը», բազմանշանակ ասում են ռազմական ուսումնարանի սպաները:

Իր տրամադրության տակ հայտնված նամակը հրապարակելուն զուգահեռ «Ենի մուսավաթ»-ը վերստին մեկնաբանություններ է խնդրել ՊՆ խոսնակ Էլդար Սաբիրոլլուից: Հերքելով Սաֆար Աբիեւին վերագրվող մեղադրանքները, Սաբիրոլլուն ասել է, թե իր համար «պարզ է, ինչ աղբյուրից են հրահրվում նման սադրանքները», ինչին թերթի թղթակիցն արձագանքել է.

- Դուք նկատի ունեք գլխավոր շտաբի պետի՞ն:

- Ես անուններ չեմ նշում, կարծում եմ՝ ում նկատի ունեմ, իրենք կհասկանան,- պատասխանել է ՊՆ խոսնակը:

Ըստ էության, Սաբիրոլլուն չի հերքել, որ պաշտպանության նախարարի եւ գլխավոր շտաբի պետի միջեւ սուր հակասություններ կան, եւ «կոմպրոմատների պատերազմն» արդեն դարձել է հանրության սեփականությունը: Ադրբեջանում «լայն թափով» ծավալվում է զինկոմիսարիատներում «կոռուպցիայի դեմ պայքարը»: Արդեն իսկ մի շարք զինկոմներ պաշտոնազրկվել են, կան ձերբակալվածներ: Այդ ամենը, սակայն, արվում է գլխավոր շտաբի պետի դեմ Սաֆար Աբիեւի սկսած արշավի շրջանակներում, քանի որ զորակոչի եւ նորակոչիկների տեղաբաշխման գործը մինչեւ վերջերս ղեկավարվել է գլխավոր շտաբի պետի կողմից:

Վերջինս էլ, ամենայն հավանականությամբ օգտագործելով իր լծակներն ու համախոհների հնարավորությունները, անցել է հակագրոհի եւ մեկ առ մեկ բացահայտում է Սաֆար Աբիեւի մեքենայությունները: Իրավիճակն այնպիսին է, որ ժողովրդական լեզվում բնութագրվում է «երկու գլուխ մի կաթսայում չի եփվի» այլաբանությամբ: Ակնհայտ է դառնում, որ Իլհամ Ալիեւը երկուսից մեկին պետք է զոհաբերի կամ երկուսին էլ միաժամանակ հեռացնի զինված ուժերից: Բայց կունենա՞ նա այդման հաջողություն: Թերեւս՝ ոչ: Բայց դա փրկություն չէ, քանի որ հակառակ դեպքում հնարավոր է, որ դժգոհ սպաները խռովություն կազմակերպեն եւ միանգամից լուծեն անգործունակ «գերագույն գլխավորի» հարցը:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Պարգեւատրվել է եգիպտացի հայագետ, ցեղասպանագետ Մուհամմադ Ռեֆաթ ալ Իմամը

Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հրամանագրով եգիպտացի պատմաբան, հայագետ ու ցեղասպանագետ, Ալեքսանդրիայի համալսարանի պրոֆեսոր, դոկտոր Մուհամմադ Ռեֆաթ ալ Իմամը պարգեւատրվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության մեդալով՝ հայկական մշակույթն ու պատմությունն արաբական աշխարհում ներկայացնելու գործում ունեցած ավանդի համար: Այս մասին տեղեկացանք արտաքին գործերի նախարարությունից: Շքանշանի հանձնումը եղել է հուլիսի 17-ին՝ Եգիպտոսում Հայաստանի դեսպանությունում կազմակերպված մեծարման երեկոյի ժամանակ: Մուհամմադ Ռեֆաթին պարգեւը հանձնել է Եգիպտոսում Հայաստանի դեսպան Արմեն Մելքոնյանը:

Մուհամմադ Ռեֆաթի գրչին են պատկանում «Հայ գաղթօջախի պատմությունը Եգիպտոսում», «Հայկական հարցն Օսմանյան պետությունում 1878-1923թթ» եւ արաբերենով հրատարակված արժեքավոր այլ աշխատություններ:

Մուհամմադ Ռեֆաթ ալ Իմամը նաեւ խմբագիրն է Կահիրեի «Արեգ» (նախապես՝ «Արեւ») հայկական արաբալեզու գիտավերլուծական ամսագրի:

Ի. Պ.

Հայաստանը դեռեւս Սահարա չէ

Սակայն անապատացման վտանգը չի մեղմանում

ՀԱՄԼԵԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հայաստանին անապատացման վտանգ չի սպառնում», «Պոստ սկրիպտում» ակումբում հավաստիացնում էր գյուղնախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն **Մարտուն Մաթեւոսյանը**: Նրա գնահատմամբ՝ հաճախ բնապահպանները խնդիրը ուռճացնում են: «Դա բնական է: Սակայն փաստն այն է, որ 90-ականների զանգվածային ծառահատումներից հետո այսօր անտառներն ու այգիները վերականգնվում են», ասում է Մաթեւոսյանը: Նրա մեկնաբանությամբ՝ անտառների թիվ մեկ հիմնախնդիրը հիվանդություններն են: «Հայանտառը»-ը իրականացնելու է անտառաաթոլոգիական ուսումնասիրություններ, որոնց հիման վրա 20.000 հա. տարածքում ավիահիմնական պայքար է իրականացվելու:

Անդրադառնալով ապօրինի հատումներին՝ գյուղնախարարության ներկայացուցիչը նշում է, որ անցյալ տարի գրանցվել է 520 դեպք:

«Այս տարի այդ առումով աճ է նկատվում: Արդեն գրանցվել է 1700 դեպք»: Մաթեւոսյանը դա բացատրում է գազի գնի թանկացմամբ: Անտառամերձ գյուղերի բնակիչները գազի փոխարեն նախընտրում են փայտ վառել:

«**Ազգ**»-ի հարցին ի պատասխան՝ Մաթեւոսյանն ասաց, որ հաճախ գրանցվում են հրդեհներ, որոնցից խուսափելն անհնար է, «Սակայն յուրաքանչյուր ջանք գործադրում ենք, որպեսզի վնասները հասցվեն նվազագույնի»:

«Հայաստանում անապատացման լուրջ վտանգ կա», «**Ազգի**» հետ հեռախոսազրույցում ասաց «Հանուն կայուն մարդկային զարգացման» ՀԿ-ի նախագահ **Կարինե Դանիելյանը**՝ հիշեցնելով, որ անապատացման դեմ պայքարի կոնվենցիա է ստորագրվել, 2 զեկույց հրապարակվել: «Անապատացման ռիսկը շատ բարձր է: Գուցե պարոն Մաթեւոսյանը նկատի ունի դասական անապատի հասկացությունը, ասենք, ինչպես Սահարան: Իհարկե, այդ առումով Հայաստանին դեռեւս չի սպառնում Սահարայի կարգավիճակը, սակայն ՄԱԿ-ը հողային շերտի յուրաքանչյուր դեգրադացում համարում է անապատացման գոտի: Հաշվի են առնվում հողի բերրիությունն ու կանաչապատումը: Այսօրվա կլիմայի փոփոխության պայմաններում, Հայաստանը կանգնած է լուրջ վտանգների առաջ, որովհետեւ անտառները հիմնականում տեղակայված են բարձրադիր գոտիներում՝ սարերի վրա եւ անտառների նոսրացումից ու հորդառաս անձրեւից հեղեղներ են առաջանում»:

Կարինե Դանիելյանը՝ հղում կատարելով վիճակագրությանը, նշում է, որ վերջին տարիների ապօրինի ծառահատումների թիվը նվազել է: «Սակայն պետք է տարբերակել երկու իրավիճակ: Ապօրինի անտառահատումների թիվը նվազել է, որովհետեւ վերահսկողությունն է շատացել, թե՞ ճանապարհամերձ տարածքներում այլեւս հատելու ոչինչ չկա, եւ ծառերը մնացել են միայն դժվարանցանելի վայրերում»:

Բնապահպանը չի բացառում, որ հաճախ գերակա շահ անվան տակ հատվում են ծառեր՝ սպասարկելով մի խումբ անձանց:

«Կադաստրից եւ տիեզերքից կատարված ուսումնասիրություններում կան բազմաթիվ անհամաձայնություններ: Կադաստրի տրամադրած տվյալներով՝ Հայաստանի անտառածածկ տարածքը կազմում է 11%, իսկ տիեզերքից կատարված ուսումնասիրությունների համաձայն, դեռեւս 2001-ին անտառածածկ տարածքները կազմում էին 8%: Եթե վերլուծենք, թե այդ ընթացքում որքան անտառ է հատվել, ապա կարելի է փաստել, որ անտառածածկ տարածքների թիվը նվազել է: Կադաստրում ներկայացված անտառածածկ տարածքները ՆԱՍՍԱ-ի տվյալներով բացակայում են»:

Տես էջ 3

ԱԶԳ

Ընթացիկ

Խստական բաժանորդավճար գործարար բաժանորդների համար

Ֆիխված հեռախոսակայի ոլորտում, չնայած մի քանի տարի է, ինչ վերացել է «Արմենտելի» մենաշնորհը, բայց փաստացի այն դեռևս պահպանվում է: Ճիշտ է, արդեն հայտնվել են ֆիխված հեռախոսակայի ծառայություններ մատուցող ընկերություններ, բայց նրանց ներկայությունը շուկայում դեռ աննշան է: Այս պարագայում ֆիխված հեռախոսակայի սակագներն ու բաժանորդավճարը շարունակում են համարվել հանրային ծառայություն եւ սահմանվում հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

Յուրաքանչյուր անգամ, երբ «Արմենտելը» հանձնաժողով էր դիմում սակագների վերանայման հայտով, բողոքի մեծ ալիք էր բարձրանում դրա դեմ: Դժգոհությունը պայմանավորված էր լինում բնակչության սոցիալական վիճակով եւ սակագների բարձրացման դեպքում այդ ծառայությունից օգտվելու ավելացող ծախսերով: Սակայն ոչ մի անգամ ֆիխված կապի սակագների հաստատման ժամանակ ֆնարկման առարկա չէին դառնում գործարար բաժանորդների համար սահմանվող սակագները կամ բաժանորդավճարը: «Արմենտելն» ու հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն էլ, առանց հաշվի առնելու գործարար բաժանորդների շահերը, կայացնում էին իրենց հարմար փոխշահավետ որոշումը: Ներկայումս գործարար բաժանորդների համար սահմանված է անտրամաբանական բարձր բաժանորդավճար՝ ամսական 4800 դրամ, ավելի քան 4 անգամ թանկ բնակիչ բաժանորդի համար սահմանված 1100 դրամ բաժանորդավճարից:

Հատկապես փոքր բիզնեսի ներկայացուցիչներն իրենց դժգոհությունն են հայտնում նման բարձր բաժանորդավճարից: Դա լրացուցիչ մեծ ծախս է նրանց համար: Ճիշտ է, գործարար բաժանորդների համար նույնպես գործում է ամսական 360 րոպե անվճար խոսելաժամանակը, բայց երբ դա համադրում ես 4800 դրամի հետ, ապա պարզապես զավեշտ է ստացվում՝ 4800 դրամի դիմաց 360 րոպե անվճար խոսելն գործարար բաժանորդի համար արժեքնում է 1 րոպեի համար 13,3 դրամ: Որքանո՞վ է արդար նման խստական մոտեցումը գործարար բաժանորդների նկատմամբ: Ավելի լավ կլիներ, որ նրանց համար եւս «Արմենտելը» բաժանորդավճարը սահմաներ 1100 դրամ, փոխարենն ընդհանրապես անվճար խոսելաժամանակ չնախատեսեր եւ առաջին իսկ րոպեից գործեր 1 րոպեն 5 դրամ սակագինը: Սրանով, նախ՝ հանձնաժողովն ու «Արմենտելը» որպես լավություն չէին ներկայացնի անվճար 360 րոպեի տրամադրումը գործարար բաժանորդներին, ապա՝ վերջիններիս վճարած գումարը դարձյալ կտարբերվեր եւ ավելի բարձր կլիներ բնակիչ բաժանորդների վճարածից, եւ վերջապես՝ գործարար բաժանորդները կկարողանային հետեւել իրենց խոսակցությունների ժամանակին եւ խնայել իրենց գումարը:

Երբ կառավարության կողմից կատարվում են քայլեր հարկային եւ մաքսային ոլորտներում ուղղված բիզնեսի ընթացակարգերի պարզեցմանն ու ծախսերի նվազեցմանը, երբ պետական ծառայությունների ոլորտներում ավելորդ ծախսերն ու քաշքշուկներ են վերացվում, գործարար բաժանորդների համար ֆիխված կապի սակագների վերանայման հարցը հրատապ է դարձել: Ցանկալի կլինի, որ այդ հարցը կարգավորի հենց «Արմենտելը»: Հակառակ դեպքում ապագայում կհայտնվի նույն վիճակում, ինչ ներկայումս նրա բջջային կապի ոլորտն է հայտնվել: Իսկ եթե ոչ, ապա այդ հարցը պետք է բարձրացնի հանձնաժողովը, որն օրենքով նման իրավասություն ունի:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ժողովրդի խնդիրները երկխոսությանը...

1-ին էջից

Այդպես մարդիկ կարծես մի պահ մոռացան տարբեր սոցիալական խնդիրները բարձրացնելու անհրաժեշտության մասին՝ այդպիսով հանգիստ տալով իշխանությանը: Սակայն այդ մոռանալը պատրանք է, որ ուզած պահի կարող է ի չիք դառնալ: Այսինքն՝ ավելի հասկանալի բառերով եթե նկարագրենք՝ ընդդիմադիր մյուս միավորների դերի նվազեցում եւ իշխանության՝ ավելի վստահ գործելու հնարավորություն, ահա այս է աղահովել երկխոսության մասին խոսակցությունը:

Բավական էր ՀԱԿ-ի պատվիրակների մոտ իշխանական երկխոսող խմբի անդամները «պապայի արեւ» երդվեն, որ ոչ մի թեմայի հետ կապված ֆնարկման տաբու չկա՝ ՀԱԿ-ն արդեն խոսում է նախագահ Սարգսյանի հետ ընտրության հարց լուծելու մասին: Ու կարեւոր չէ, թե տեսախցիկների առջեւ իշխանական պատվիրակության ներկայացուցիչն ասում է, թե վերջնագրերի լեզվով էլ չեն խոսելու, կողմերը բաց են երկխոսության համար, քաղաքական միջավայր են առողջացնում՝ անկախ նրանից արտահերթ, թե հերթական ընտրություններ են լինելու (Դ. Հարությունյան), մի խոսքով՝ քաղաքական միջավայրի առողջությունն է գլխավորը: Կարեւորն այն է, որ ամեն հանդիպման կամաց-կամաց հասարակությանը կթելադրվեն ՀԱԿ-ի եւ իշխանության՝ իրար մոտեցող տեսակետները, որոնք ինչ-որ պահի չեն բացառի արտահերթ ընտրությունները: Ուրիշ բան, թե այստեղ կողմերն ամեն մեկն իր շահի ու իր նպատակահարմարության խնդիր է տեսնում: Իշխանությանը պետք է առանց ցնցումների իշխանություն պահպանել՝ չնայած տնտեսական լարվածության թուլացման, սոցիալական խնդիրների կուտակման եւ սովորական մարդու հոգսի ռեալ թեթեւացման խնդիր չի լուծվել, իսկ դե ՀԱԿ-ն էլ, այսքան տանջվել-տառապելուց հետո կուզենա իշխանության գալ, պատգամավոր ու նախարար ունենալ, մի խոսքով իշխանությունից կտոր փախցնել: Իսկ եթե մյուս ընդդիմադիրների հաշվին այդ կտորը շատ ավելի մեծ լինի՝ ավելի լավ: Սակայն խնդիրն այն է, որ այս բոլորից հետո ոչ մարդիկ կսկսեն լավ ապրել, ոչ դատավորները կդադարեն կաշառք վերցնելուց, ոչ էլ պահիրը 2500 դրամից կվերադառնա իր 1800 դրամ ելման վիճակին: Այսինքն՝ մարդկանց բողոքի ու լարվածության բուն պատճառները կմնան, ուղղակի կտեղափոխվեն այլ ժամանակի մեջ, կգան նոր բողոքավորներ եւ գուցե նոր քաղաքական ուժեր: Բայց այդ բոլորը հետո, գուցե նույնիսկ մի երկու տարի հետո կլինի, երբ իշխանությունը ժամանակ կշահի, վերջնականապես կավերի ընդդիմադիր դաշտը՝ ՀԱԿ-ին իշխանության բերելով, իսկ մյուս ընդդիմադիրներին վերջնականապես ցրիվ տալով, իր միավորներից ԲՀԿ-ին էլ հնարավորինս չեզոքացնելով: ՀԱԿ-ն էլ իր վաղեմի երազանքը՝ լինել միակ ընդդիմադիր ուժը, խորհրդարան մտնելուց առաջ կարճ ժամանակ իրականացված կտեսնի, իսկ խորհրդարանում գուցե իր հին մասի՝ ՀՀՇ-ից ՀՀԿ անցածների հետ կոալիցիա կկազմի, ներկայացված կլինի կառավարությունում: Փոշիացած մնացյալ ընդդիմությանը եւ հասարակության բողոքավոր հասվածին (որի հիասթափության աստիճանը շատ մեծ կլինի, որ անմիջապես ուշքի գա) մի երկու տարի պետք կլինի ընտրություններից հետո ուժ հավաքելու: Ահա այսպես, իշխանությունը կլուծի իշխանություն մնալու հարցը՝ ՀԱԿ-ին էլ դրանից բաժին հանելով: Կուժը կգա իր հին խուփը կգտնի (այդ սցենարի հետ անհամաձայն իշխանական փշուրները եւս կգնան անհայտություն), եւ այդպես էլ կպարզվի ուրախ ու երջանիկ, քաղաքական նոր մշակույթ ձեւավորած, պետականությանը վնաս չտված: Իսկ սովորական մարդու ու նրա խնդրի հետն անիծած: Մի բայց միայն: Այս նույն սցենարը կարող է ավելի արագացված աշխատել Ղարաբաղի հարցում լուծում պարտադրելու պարագայում, այն եւս մինչեւ այս տարեվերջ, երբ Հայաստանին պարտադրվի Արցախի հարցի լուծման աննպաստ տարբերակ: Այս դեպքում հո արտահերթ ընտրությունները կարող են փրկություն դառնալ իշխանության համար, իսկ ՀԱԿ-ն էլ ոչ մի բանում չի հակախոսի, քանի որ նույն վերը նշված սցենարը կաշխատի՝ այս անգամ այլ պատճառով:

Համենայն դեպս զույգ պատվիրակությունների՝ տեղի ունեցած առաջին հանդիպման վերաբերյալ երեկ հնչած արձագանքները վերը նշված սցենարի համար հիմք տալիս էին: «Երկխոսությունը դրական է, քանի որ հանդարտեցնում է ներքին մթնոլորտը», սա «**Ազգի**» խմբագիրն էր ասում «Հայելի» ակումբում, բայց որ այդ հանդարտ մթնոլորտը չի նշանակում տնտեսական ճգնաժամի հաղթահարման, արտագաղթի կանխարգելման խնդիրների լուծում, այս եւս նա նկատեց: «Ժառանգությունից» **Ռուբեն Հակոբյանը** ՀԱԿ-իշխանություն երկխոսության մասին ասել էր, թե արդեն 5 ամիս ինչ երկխոսության գործընթացը սկսվել է՝ ընդդիմադիր ֆոնն է փոխվել, իշխանությունը ՀԱԿ-ի օգնությամբ վերարտադրվելու է, եվրոպական կառույցներում էլ ՀԱԿ-ի միջոցով կարողացավ լեգիտիմ եւ ժողովրդավար կերպար ձեռք բերել: ՀԱԿ-ի՝ արտահերթ ընտրությունների պահանջը Ռ. Հակոբյանը ժողովրդի զգացմունքները գողանալու ձեւ է համարում, ընդդիմադիր դաշտում միակը լինելն ապահովող գործոն: ՀՀԿ-ական **Լեռնիկ Ալեքսանյանը**, երեկ չբացառեց արտահերթ ընտրությունների շուրջ քննարկումները (չնայած ասում էր, թե կոալիցիան կիմնավորի արտահերթի համար նախադրյալների չլինելը), հետո էլ մի լավ գովեց Տեր-Պետրոսյանին՝ խելացի, բարդ տարածաշրջանային իրավիճակը հասկացող, եւ այլն...

Մյուս կողմից՝ նախկին ՀԱԿ-ական **Կարապետ Ռուբինյանը** (Առցանց ազատականների ալյանս) մեկ որ առաջ նկատել էր, թե որպես ՀՀ քաղաքացի ինքը չի լիազորել ՀԱԿ-ին՝ իր անունից բանակցություններ վարելու, ՀԱԿ-ը ժողովրդի անունից «գյալաջի» անելու մանդատ չունի, եւ բանակցություններն էլ աչքակապություն եւ ժամավաճառություն են:

ԲԱՅՈՒՄ ԱՂՄՈՒԿ ՎԱՍՆ...

Մայր աթոռից արձագանքեցին «Ձենք լռելու» նախաձեռնության հայտարարությանը

Ըստ «Ձենք լռելու» երիտասարդական նախաձեռնության հաղորդագրության՝ հուշարձանագետ Սամվել Կարապետյանը Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսին տեղեկացրել է Սանահինի վանական համալիրի ողբալի վիճակի մասին իբր պատասխան ստացել, թե՝ «կաթողիկոսը որեւէ գործ չունի լեռներում գտնվող վանքերի եւ եկեղեցիների հետ»: «Ձե՛նք լռելու» երիտասարդական նախաձեռնությունը ցավ էր հայտնել այդ պատասխանի առիթով, որը երեկ բավականին հնչեղություն ստացավ լրատվական կայքերում, իսկ «Ֆեյսբուք» սոցիալական կայքում նույնիսկ այս առթիվ կաթողիկոսի հրաժարականը պահանջող նախաձեռնություն սկսվեց:

Երեկ այս առիթով հաղորդագրություն էր տարածել նաեւ Մայր Աթոռի հասարակայնության հետ կապերի պատասխանատու **Վահրամ քահանա Մելիքյանը**, ով Սամվել Կարապետյանի եւ «Ձենք լռելու» երիտասարդական նախաձեռնության հայտարարության առնչությամբ նշել է. «Մայր աթոռ Ս Էջմիածինը խստորեն դատապարտում է այդ հանդուգն հայտարարությունները, որոնցով մեղադրանքներ են հնչում Հայ Եկեղեցու հասցեին եւ վերագրումներ կատարվում Ամենայն հայոց կաթողիկոսին: Պրն. Սամվել Կարապետյանն ամբողջությամբ խեղաթյուրված է ներկայացնում զրույցը Ամենայն հայոց կաթողիկոսի հետ: Անամոթություն եւ լկտիություն է եկեղեցիների եւ սրբավայրերի պահպանության առնչությամբ ավելի ցավսիրտ ներկայանալ, քան Ամենայն հայոց կաթողիկոսը կամ որեւէ թեմական առաջնորդ եւ եկեղեցական:

Նորին Սրբության ուշադրության ներքո են բոլոր վանքերն ու եկեղեցիները, սակայն Մայր աթոռ Ս. Էջմիածինն ի վիճակի չէ բոլոր վանքերի նորոգությունը միաժամանակ իրագործել եւ բազմիցս այդ մասին ասվել է, որ մեր հոգեւոր ժառանգության պահպանությունը կարելի է իրականացնել միայն պետության հովանավորությամբ եւ աջակցությամբ: Այդուհանդերձ Մայր աթոռը իր սուղ միջոցներով հանդերձ հետամուտ է նորոգության առավել կարիքի մեջ գտնվող վանքերի ու եկեղեցիների: Իսկ նորոգված եւ այսօր նորոգվող տաճարները, ինչպես օրինակ՝ Գեղարդավանքը, Հառիճավանքը, Սաղմոսավանքը, Նորավանքը, Խոր Վիրապը, Աղարանի Ս. Խաչը, Տաթեւը եւ բազում այլք, խոսուն վկայությունն են հնչող մեղադրանքների անհեթեթության», ասել է Վահրամ քահանա Մելիքյանը:

Մ. Խ.

Հայաստանում կուսուցանվի նոր մասնագիտություն՝ մեխատրոնիկա

Ուսումնական այս տարվանից առաջին անգամ Հայաստանում, կրթության եւ գիտության նախարարության լիցենզավորմամբ, կուսուցանվի «Մեխատրոնիկա» մասնագիտությունը: 4-ամյա կրթության արդյունքում ապագա տեխնիկ մեխատրոնիկները պատասխանատու կլինեն արդյունաբերության ոլորտում ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման համար:

«Հայաստանում այդ տեխնոլոգիաներն առայժմ ակտիվ կիրառվում են սննդի արդյունաբերության ոլորտում: Սակայն առաջիկայում ակնկալում ենք, որ տարբեր հատոցներ, հոսքագծեր եւ ռոբոտներ կներդրվեն արդյունաբերության այլ ճյուղերում եւս: Իսկ դրանց կառավարման համար անհրաժեշտ մասնագետներ չկան, եւ այս դասընթացը գալիս է լրացնելու այդ բացը»,- ասաց Երեւանի Ինֆորմատիկայի պետական քոլեջի տնօրեն **Արտաշես Աբրահամյանը**:

Դասընթացը մեկնարկել է Երեւանի Ինֆորմատիկայի պետական քոլեջի եւ Միացյալ Թագավորության Բրեդֆորդի քոլեջի միջեւ ձեւավորված երկամյա համագործակցությամբ: 2007 թվականին Բրիտանական խորհուրդը նախաձեռնեց «Հմտություններն աշխատանքում» ծրագիրը, որի նպատակն էր միջին մասնագիտական կրթության ոլորտում ձեւավորել համագործակցություն Հայաստանի եւ Միացյալ Թագավորության միջեւ եւ նպաստել փորձի փոխանակմանը: Հենց այս ծրագրով էր, որ Երեւանի Ինֆորմատիկայի պետական քոլեջի եւ Բրեդֆորդի քոլեջի միջեւ հաստատվեց համագործակցության ծրագիր եւ մեկնարկեց դասընթացը:

«Մեխատրոնիկա» մասնագիտության դասընթացը մեկնել են հայ եւ անգլիացի մասնագետները՝ կիրառելով այս ոլորտում անգլիական փորձը: Մինչ դասընթացի ներդրումը Հայաստան են այցելել անգլիացի մասնագետներ, որոնք հետեւել է հայ ներկայացուցիչների եւ ուսանողների այցը Բրեդֆորդ՝ տեղում ծանոթանալու այդ երկրի փորձին», - նշեց Բրիտանական խորհրդի ծրագրերի ղեկավար **Նարեկ Թովմասյանը**:

Նարինե Նազինյանը, որ ավարտել է Երեւանի Ինֆորմատիկայի պետական քոլեջն ու այժմ սովորում է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում, մասնակցել է քոլեջի ուսանողների համար կազմակերպած փոխայցելությանը:

«Բրեդֆորդի քոլեջի փորձին ծանոթանալը մեզ համար շատ արդյունավետ էր: Մեծ էր տարբերությունը դասավանդման մեթոդների եւ տեխնիկական հագեցվածության միջեւ: Մեր այցը մեկ շաբաթ տեւեց, եւ այս ընթացքում մենք ամեն օր այցելում էինք Բրեդֆորդի քոլեջ, ծանոթանում նրանց փորձին»,- ասաց **Նարինեն**:

Նոր մասնագիտության համար քոլեջն արդեն սկսել է հայտերի ընդունումը, եւ ինչպես նշում է Արտաշես Աբրահամյանը, արդեն ստացել են մի քանի տասնյակ հայտեր, սակայն մրցույթով կընտրվի 20 ուսանող:

«Սա իսկապես հեռանկարային մասնագիտություն է: Բրիտանական խորհրդի շնորհիվ մեր եւ Բրեդֆորդի քոլեջի միջեւ ստեղծված համագործակցությունն այս մասնագիտության ներդրմամբ շարունակական է լինելու»,- ասաց Երեւանի Ինֆորմատիկայի պետական քոլեջի տնօրեն Արտաշես Աբրահամյանը:

ԱՐԵՎԻԿ ԲԱՂԱԼՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռարձակութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Երբ ուշադրություն կա եւ արագ արձագանք

Երեւանի այն հասվածը, որտեղ ապրում եմ արդեն 15 տարի եւ ավելի, ջրամատակարարման խնդիր, կարելի է ասել, չի ունեցել: Նույնիսկ քսի ու մթի տարիներին ջրազրկում գրեթե շատ սակավ է եղել: Սա, կարծում եմ, մեծ առավելություն է քաղաքի շատ հասվածներում օրվա ընթացքում մի քանի ժամվա ջրամատակարարման համեմատությամբ: Հետագայում քաղաքի ջրամատակարարման ծառայության բարեփոխումների հետեւանքով, անշուշտ, առավել բարվոք վիճակ ստեղծվեց: Համենայն դեպս, Հակոբ Հակոբյան փողոցի վերջնամասի եւ դրանից սկսվող Քեռու փողոցի (Մերգելյան ինստիտուտի շրջակայք) բնակիչները «ջրային» բողոք, կարծում եմ, չունեն: Ջուրը շուրջօրյա է, եւ այսքան տարիների ընթացքում լուրջ վթար, անգամ նախկին՝ հին խողովակաշարերի ժամանակ էլ չի եղել, միայն մեկ դեպք եմ հիշում: Ներկայումս մոնտաժման կամ վերանորոգման աշխատանքների հետ կապված երբեմն լինում են ջրամատակարարման դադարեցումներ: Սակայն, ի դրվատանք «Երեւան ջուր» ՓԲԸ-ի, պետք է ասել, որ ընկերությունը մի քանի օր առաջ այս մասին հստակ տեղեկացնում է բնակչությանը տարբեր լրատվամիջոցներով: Բացի այդ, ինչը որ շատ գովելի է, յուրաքանչյուր բնակիչ այս մասին տեղեկացվում է նաեւ հեռախոսազանգով եւ անգամ հաղորդագրություն է թողնվում (ջրի որակի մասին չէ, իհարկե, մեր այս ակնարկը):

Երեւանում հաճախ կարելի է բակերում կամ փողոցներում տեսնել ջրի անտեղի հոսք, կորուստ: Բնության ռեսուրսների, ի թիվս դրանց՝ ջրի խնայողության մասին վերտին հիշեցնելը նույնիսկ անտեղի է: Երեւույթն այնքան ակնհայտ է եւ մարդու կեցությանը, գոյությանն այնքան անմիջապես սպառնող, որ ամեն գիտակից ոք պատկերացնում է բնության հանդեպ մեր անփութության բոլոր հնարավոր հետեւանքները: Մանավանդ դրանք (վտանգները) արդեն ակնառու են: Բնապահպանական ահազանգերն ու վիճակագրությունը, գիտական վերլուծումները եւ վերջապես մեր ամենօրյա կյանքի փորձը, մեր ապրածը բավարար հաստատումներ են:

Հիշում եմ, թե ինչպես «Արեւորդի» պատանի բնապահպանների մի խումբ իր հերթական ծրագրերից մեկում մտահոգել էր Երեւանի ցայտաղբյուրներին փական ամրացնել, ջրի մշտական հոսքը կանխելու, ջուրը խնայելու համար:

Վերջերս Քեռու փողոցի շենքերից մեկի բակով անդադար ջուր էր հոսում: Այդպես լինում է, երբեմն ավտոնակների խողովակներն են վնասվում, երբեմն կոյուղաջրեր են հոսում: Բայց երկար չէր տեւում, կանխվում էր: Այս վերջինը, խմելու մաքուր ջուր էր եւ ամսից ավելի հոսում ու հոսում էր: Եվ քանի որ որոշակի մեկին չէր վերաբերում, մարդիկ անտարբեր անցնում-դառնում էին ջրային գոյացումների վրայով, նկատում կամ չէին էլ գուցե անդրադառնում, որ շաբաթներ շարունակ ջուր է զուր տեղը կորչում: Ջուրը կյանքի գոյության հիմքն ու խորհրդանիշներից մեկն է, բնության առաջին տարրը- կապույտ ոսկին:

Խոստովանենք, մեր՝ բնակիչներիս անտարբերությունը նույնպես վտանգավոր է: Վերջապես մի օր «Երեւանջուր» ՓԲԸ Արաբկիր համայնքի թիվ 3 տեղամաս մտա, ներկայացրի խնդիրը: Տեղամասի պետը՝ երիտասարդ, լրջադեմ, ուշադիր լսեց, գրանցեց եւ խոստացավ լուծում տալ խնդրին, ասելով, որ ինձնից առաջ մի կին եւս տեղեկացրել էր իրենց: Անկեղծ ասած, մտածեցի՝ թե խոստումը թղթի վրա էլ կմնա, բայց՝ սխալվեցի: Երբ առավոտյան բակից վերանորոգող տեխնիկայի ծանոթ ձայները լսեցի, զարմացա: Վնասված

ջրագծերը կարգավորվեցին շատ արագ, ջրահոսքը դադարեց:

Ափսոս էր նախկինում հոսած ջուրը, բայց հուսադրող էր տեղամասի պետի եւ աշխատակիցների արագ արձագանքը եւ ուշադրությունը: Ավելի ուշ տեղեկացա, որ իրենք չունեն մասնագետ վարպետներ, որովհետեւ ծառայություն՝ որպես այդպիսին, ընկերությունում չկա, եւ մենք էլ՝ բնակիչներս, իրոք, սպասարկման վարձավճար չենք մուծում: Բայց միեւնույնն է, աշխատանքն արվեց, եւ դա գովելի է:

Մ. Ք.

Մայրաքաղաքում կգործի 9600 ավտոկայանատեղ

Քաղաքապետարանում կայացած արտահերթ նիստի ժամանակ Երեւանի ավագանու համաձայնությանն է արժանացել «Երեւան տրանսպորտ օփերեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ համատեղ ընկերություն ստեղծելու նախագիծը: Քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության փոխանցմամբ՝ քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման եւ ներդրումային վարչության պետը նիստի ժամանակ նշել է, որ ընկերությունը զբաղվելու է վճարովի ավտոկայանման ավտոմատացված կայանատեղերի միջոցով կայանման կառավարման համակարգի ներդրմամբ: Համաձայն նախագծի՝ մայրաքաղաքում նախատեսվում է տեղադրել 400 ավտոկայանման սարքավորում, որոնցից յուրաքանչյուրը կսպասարկի 24 կայանատեղի: Մայրաքաղաքում ընդհանուր առմամբ կգործի շուրջ 9600 ավտոկայանատեղ: Առաջին տարվա ընթացքում ընկերությունը կապահովի 36 աշխատատեղ. սակայն նախատեսվում է այդ թիվը հասցնել 84-ի:

Ավագանու հավանությանն է արժանացել նաեւ Երեւան քաղաքի բյուջեում փոփոխություն կատարելու նախագիծը: Քաղաքապետ Կարեն Կարապետյանի մեկնաբանությամբ՝ վերոնշյալ գումարները կծախսվեն Անկախության օրվան եւ «Երեւանի օր» տոնակատարություններին նվիրված միջոցառումների ծրագրի իրականացմանը: Քաղաքապետը հավելել է, որ կստեղծվեն մայրաքաղաքի համար կարեւոր գեղագիտական արժեքներ: Ավագանին որոշել է նաեւ գումար հատկացնել քաղաքապետարանի ենթակայության տակ գործող դպրոցների 1-ին, 5-րդ եւ 6-րդ դասարանի աշակերտներին գրենական պիտույք ձեռքբերելուն:

Հ. Հ.

Հայաստանը դեռեւս Սահարա չէ

1-ին էջից

Կարինե Դանիելյանը շեշտում է՝ անտառների հիմնախնդիրը կապակցված է հանքարդյունաբերության հետ: Բաց հանքերը անտառների թիվ մեկ թշնամիներն են: Թեպետ բնապահպաններն առաջարկել են, որ մոտակա հինգ տարվա ընթացքում կառավարությունն արգելի որեւէ հանքի շահագործում, սակայն գերատեսչությունում հակառակ տեսակետի կողմնակիցն են:

Կարինե Դանիելյանը պատմում է, որ միայն անցյալ տարի ուժեղ հրդեհներ են գրանցվել Սյունիքի, Վայոց ձորի եւ Տավուշի մարզերում: Թե որքանով են այդ հրդեհներն արհեստական՝ բնապահպանը լռում է, սակայն չի բացառում, որ «հանուն գերակա շահի» հաճախ կազմակերպվում են «արհեստական հրդեհներ»: Օրինակ, երեք տարի առաջ Սարալանջի Նորքի անտառները «վերահսկվող հրդեհ» անվան տակ այրեցին:

«Իհարկե, հրդեհը միանգամից դարձավ անվերահսկելի եւ ամբողջ տարածքն այրվեց: Այժմ Նորքի անտառի տեղում վիլլաներ են կառուցված: Ջերմուկի ճոպանուղու կառուցման ժամանակ էլ հարյուրավոր ծառեր հատվեցին: Մենք առաջարկում էինք, որ ճոպանուղին կառուցվեր ոչ անտառի միջով, այլ սարի հարեւանությամբ, որտեղ բուսականություն չկար: Սակայն ծառերը հատեցին, այդ ժամանակ լուրեր տարածվեցին, որ հայտնի օլիգարխներից մեկը փայտի բիզնես էր իրականացնում, եւ հենց դա էր պատճառը, որ կառավարությունը թույլատրեց անտառը հատել: Մինչդեռ այսօր ճոպանուղին բազմաթիվ անհարմարություններ է պատճառում, որովհետեւ շատ թեք է եւ միայն պրոֆեսիոնալ դահուկորդները կարող են այնտեղ մարզվել»:

Անդրադառնալով Երեւանին, բնապահպանը նշեց, որ քաղաքը կառուցվել է կիսաանապատում, եւ հենց դա էր պատճառը, որ քաղաքի կառուցմանը զուգահեռ արհեստական լճեր ու անտառներ են ստեղծվել:

«Մինչդեռ այսօր Երեւանը կամաց կամաց վերադառնում է ոչ թե կիսաանապատային, այլ անապատային կարգավիճակի: Երեւանը շատ լավ օրինակ է աշխարհին ցույց տալու, թե ինչպես չի կարելի քաղաք կառուցել»:

ԴԱՏԱՐԱՆ

Հայկ Դեմոյանի դեմ Արմեն Այվազյանի քաղաքացիական հայցի քննարկումը հետաձգվեց

Երեկ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում (դատավոր՝ Ռուբեն Ներսիսյան) սկսվեց քաղաքագիտության դոկտոր Արմեն Այվազյանի՝ պատվի, արժանապատվության եւ գործարար համբավի պաշտպանության հայցի դատական առաջին նիստն ընդդեմ ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պատմագիտության թեկնածու Հայկ Դեմոյանի:

Հիշեցնենք, որ Դեմոյանը ս. թ. մարտ-ապրիլ ամիսներին ԱՄՆ հայկական մի հեռուստատեսությամբ եւ համացանցում տեղադրած բանավոր ու գրավոր ելույթներով տարբեր մեղադրանքներ էր հնչեցրել պրն Այվազյանի հասցեին, այդ թվում՝ պետական դավաճանությունը...

Նիստի որոշված ժամին սկսվեց... մեկ ուրիշ դատական նիստ, իսկ խնդրո առարկա նիստն սկսվեց 35 րոպե ուշացումով: Մեր հարցին դատարանի քարտուղարուհին պատասխանեց, թե դահլիճները չեն բավականացնում:

Հայցվորին ներկայացնում էր ՀՀ փաստաբանական պալատի անդամ Արթուր Գրիգորյանը, իսկ պատասխանող կողմն առհասարակ բացակայում էր: Պրն Գրիգորյանի փաստաթղթերի ստուգումից հետո քարտուղարուհին ընթերցեց պրն Դեմոյանի միջնորդագրի խնդրանքը: ՀՑԹ-ի տնօրենը պատճառաբանելով գործուղման մեջ գտնվելը, միջնորդում էր նիստը հետաձգելու խնդրանքով: Թեեւ հայցվորի ներկայացուցիչը բացասաբար գնահատեց միջնորդագիրը, այդուհանդերձ, դատավոր Ռ. Ներսիսյանը, վկայակոչելով արդարադատության ինչ-ինչ սկզբունքներ, նիստը հետաձգեց հուլիսի 28-ի ժամը 16-ին՝ նույն դատարանում: Պրն Ներսիսյանը նիստը փակելուց առաջ հիշեցրեց պրն Գրիգորյանին, որ կա նաեւ կողմերի հաշտեցման հնարավորությունը, հատկապես նկատի ունենալով այն փաստը, որ երկու կողմերն էլ մտավորականներ են:

ԳԵՎՈՐԳ ՅԱՔՈԲՅԱՆ

Կարգալույծ է հռչակվել Տիրան քահանա Ավագյանը

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տիրան քահանա Ավագյանը՝ ՀՀ զինված ուժերում հոգեւոր իր ծառայությունն ինքնակամ լքելու կանոնազանց ընթացքի համար:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետեւ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Հայկ Ավագյան:

Ձեւակերպեք U-Smile սպառողական վարկ՝ ատամնաբուժական ծախսերը հոգալու համար

Յունիբանկը գործարկել է U-Smile սպառողական նոր վարկատեսակ, որը նախատեսված է ատամնաբուժական ծառայությունների դիմաց վճարելու համար: Վարկից կարող են օգտվել բոլոր ֆիզիկական անձինք, ովքեր չունեն բացասական վարկային պատմություն: Այս վարկատեսակը Բանկը տրամադրում է 24 ամիս ժամկետով, 21% տարեկան տոկոսադրույքով: Վարկի գումարը կազմում է մինչեւ 1 մլն դրամ: Ընդ որում, Բանկը չի պահանջում կանխավճար եւ գրավ: Դրա հետ մեկտեղ, հաճախորդին ընձեռվում է վարկի վաղաժամկետ մարման հնարավորություն՝ առանց տույժերի կիրառման: U-Smile վարկի ձեւակերպման համար անհրաժեշտ է այցելել Բանկի 37 մասնաճյուղերից որեւէ մեկը եւ ներկայացնել փաստաթղթերի նվազագույն փաթեթ՝ անձնագիր, սոցիալական քարտ, տեղեկանք աշխատավայրից: Անհրաժեշտության դեպքում Բանկը կարող է խնդրել նաեւ երաշխավորողի փաստաթղթեր: Տեղեկատու հեռ.՝ /010/ 59 55 55:

Վերլուծելով մեր հաճախորդների առաջարկությունները՝ ստեղծում ենք վարկատեսակներ, որոնք լիովին համապատասխանում են նրանց այժմյան պահանջներին: Մեր վարկերի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրանք հասանելի են եւ մատչելի բնակչության լայն շրջանակների համար: Եթե դուք ծրագրել եք տեխնիկայի կամ կահույքի գնում, պատրաստվում եք մեկնել ճամփորդության կամ էլ ցանկանում եք վերանորոգում իրականացնել, ապա կարող եք շահավետ պայմաններով համապատասխան սպառողական վարկ ստանալ Յունիբանկում: Մենք կշարունակենք սպառողական վարկավորման ակտիվ զարգացումը եւ մինչեւ տարեվերջ կապահովենք պորտֆելի նախատեսված 100% աճը, - ասում է Յունիբանկի սպառողական վարկերի անդերրայթինգի վարչության պետ Գուրգեն Ղուկասյանը: 30.06.2011թ.-ի դրությամբ Յունիբանկի սպառողական վարկերի քանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ աճել է ավելի քան 7 անգամ:

Հաճախորդների հարմարավետ սպասարկման նպատակով, Յունիբանկը, մասնաճյուղային ցանցի ընդլայնման հետ մեկտեղ, սահմանում է նաեւ սպասարկման կետերի հատուկ աշխատակարգ: Հիշեցնենք, որ վերջերս Երեւանի կենտրոնում բացված ՕՊԵՐԱ /Սայաթ-Նովա 1/ մասնաճյուղն աշխատում է երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 11:00-ից մինչեւ 20:00, իսկ Ամիրյան /Երեւան, Ամիրյան 12/ եւ Կոմիտաս /Երեւան, Կոմիտասի 15/2/ մասնաճյուղերը Յունիտարիմ դրամական փոխանցումներ եւ արտարժույթի փոխանակում են իրականացնում մինչեւ 19:30-ը: Յունիբանկի «Զվարթնոց» մասնաճյուղը հաճախորդներին սպասարկում է շուրջօրյա, առանց հանգստյան օրերի: Ակտիվ գործում են նաեւ Յունիբանկի պրոմո-կետերը «Նիխսե, Ֆայն» եւ «Քոմֆաս» համակարգչային տեխնիկայի խանութ-սրահներում եւ «Ավիատրանս» ավիագործակալությունում: Պրոմո-կետերի աշխատակիցները հաճախորդներին պարզաբանում են վարկավորման գործընթացը, օգնում վարկային հայտի լրացման, ինչպես նաեւ փաստաթղթերի ներկայացման գործում:

Տպավորություններ

Երեւան

Տախին, որը մեզ տեղափոխում էր «Զվարթնոց» օդանավակայան առավոտյան ժամը 4-ին, ճանապարհին մի տեղ անսարքության պատճառով կանգ առավ, մի տեղ կանգ առավ «գազ լցնելու», մեկ այլ տեղ պեսավոտեսուչը կանգնեցրեց՝ սահմանված արագությունը խախտելու եւ ամրագոտին չկապելու համար տուգանք սահմանելով վարորդին, որին գիշերվա այդ ժամին «չգիտես ով» որոշել էր զանգահարել, հասկանալի է, վարորդը մեքենան վարելիս խոսում էր: Ի դեպ, վարորդը նույնիսկ ժպիտով արձագանքեց իմ այն հարցին, թե՝ ամրագոտին կապենք, չէ՞. «Այ ախպեր, էս ժամին ո՞վ պիտի մեզ բան ասի...»: Արդեն օդանավակայանում ես ինքս իջեցրի իմ ճամպրուկը, քայլեցի բավական երկար, քանի որ վարորդը կանգնեցրել էր մեքենան բավական հեռու օդանավակայանի մուտքից, եւ մնա «Զվարթնոց» օդանավակայան: Տեսարանը բավական խոսուն էր: Առաջիկա ժամերին սպասվում էին թռիչքներ՝ Երեւան-Վորոնեժ, Երեւան-Եկատերինբուրգ, Երեւան-Մոսկվա, Երեւան-Պրահա, Երեւան-Վարշավա եւ մերը՝ Երեւան-Վիեննա: Հատկապես ռուսական ուղղությունների սպասասրահներում՝ ընտանիքներ՝ մանկահասակ երեխաներով, հսկայական ճամպրուկներով, ծրարներով, որոնց միջից երեւում էր պարունակությունը՝ սպիտակեղեն, պահածոներ, կանաչի...: Իսկ արդեն ուղեւորների գրանցման հերթերը՝ բոլորովին այլ պատմություն են. ամենեւին էլ գաղտնիք չէ՝ հայերս հերթ կանգնել չենք սիրում, բոլորս արահերթ ենք: Երեւան-Եկատերինբուրգ չվերթի ուղեւորների գրանցմանը զուգընթաց սկսվեց Երեւան-Վարշավա չվերթի գրանցումը, եւ, «սարսռելի է», բայց փաստ, բոլորը առաջանում էին բացառապես հերթով, երեւի սա այսպես է երկու պատճառով. Վարշավան «ավելի շատ» Եվրոպա է, քան Եկատերինբուրգը, եւ երկրորդը՝ Վարշավայի չվերթում հերթ կանգնածներից շատերը հայկական արտաքին չունեին...:

«Ավստրիական ավիաուղիներ»-ի օդանավում ենք. ուղեկցորդ-ուղեկցորդուհիների սիրալիր ժպիտ, նստատեղի, եթե այն պարզ չէ՝ հանգամանալից բացատրություն, համարավեստ՝ բարձիկներով ու ծածկոցներով «էկոնոմ-կլասս»-ի նստատեղեր եւ միայն մի «պակաս բան»: Ինքնաթիռ՝ որպես ձեռքի իր տեղափոխած բեռների առատություն, ընդ որում՝ հատուկ դրանց համար նստատեղերի վերեւում նախատեսված տեղերը՝ լեփ-լեցուն էին: Միգուցե «պատահականորեն», միգուցե՝ ոչ, սակայն «գերծավալուն» ուղեբեռները այդ դարակներում համարեցնում էին հիմնականում հայկական արտաքինով ուղեւորները՝ եվրոպացի ուղեւորների զարմացած հայացքների տակ:

Ուղիղ 3 ժամ տեւած հաճելի չվերթից հետո Վիեննայի օդանավակայանում ենք:

Վիեննա

Ընդամենը 5 վայրկյան, ավստրիացի սահմանապահի մեկ հայացք եւ բարի գալուստ Ավստրիա: Մեր պատվիրակության անդամներից մեկը նույնիսկ կատակեց. «Այս երկիրն ավելի հեշտությամբ է ընդունում, քան մեր երկիրը թույլ է տալիս հեռանալ», դե զարմանալու ոչինչ կարծես չկա. մենք Եվրոպայում ենք: Պարզվեց, որ այս վերջինը շատ բան է նշանակում, օրինակ՝ ձեզ դիմավորելու եկած մեքենան կարող է մեկ րոպե անգամ չուշանալ, վարորդը ձեզ կարող է օգնել՝ տեղադրելու մեքենայում ձեր իրերը, ճանապարհին ոչ մի տեղ անսարքության պատճառով չկանգնել, ոչ մի տեղ խցանման չհանդիպել, ոչ մի պեսավոտեսուչի կողմից չտուգանվել եւ չանցնել սահմանված արագությունը: Դեպի քաղաք ճանապարհին չհանդիպեց ոչ մի ոստիկանական մեքենա, բացարձակապես ոչ մի տհաճ՝ «կահույքի առք ու վաճառք» մակագրությամբ շինություն՝ խանութի ներսում եւ հատկապես դրսում վաճառվող ապրանքով: Փոխարենը՝ բնություն, կանաչ, բնապատկերներ եւ մայրուղուց հեռու միայն՝ գործարաններ, տարբեր շինություններ. մի խոսքով՝ անմիջապես տպավորություն ստեղծվեց, որ սա երկիր է, որտեղ գնահատվում ու պահպանվում է բնությունը. չէ՞ որ երկրի մասին առաջին տպավորությունը ստանում ես հենց օդանավակայանից քաղաք ճանապարհին: Մեզ տեղափոխող մեքենայի վարորդը ամբողջ ճանապարհին չմիացրեց ոչ մի տեսակի երաժշտություն, ոչ մի նախադասությամբ, բառով չպատմեց իր մասին, չնայած երեւում էր, որ ավստրիացի չէ (ամենայն հավանականությամբ՝ թուրք), եւ հավանաբար «ամբողջ կյանքում չէ, որ փոխադրող մեքենայի վարորդ է եղել»:

«Դուն հայ ե՞ս», որքան էլ սարսռելի է, այս բառերով մեր պատվիրակության անդամներից մեկին դիմեց ոչ թե մեր հայրենակիցներից, այլ պաղեստինցի մի արաբ, երբ հայ լրագրողներից մեկը նրանից հետաքրքրվեց, թե գիտի՞ արդյոք Հայաստանի մասին: Արաբը ավելացրեց (արդեն անգլերենով), որ ինքը գիտի հայոց հինավուրց եկեղեցու մասին, Երուսաղեմում նրա ունեցած ազդեցության մասին եւ այլն: Մենք ամենեւին էլ պատահական չսկսեցինք մեր «ճանապարհորդությունը» Վիեննայի փողոցներով հենց արաբի խոսքերը մեջբերելով. ինչպես եվրոպական գրեթե բոլոր խոշոր քաղաքները, Ավստրիայի մայրաքաղաքը նույնպես՝ բնիկ ավստրիացիների խիստ «կարիք ունի»: Արաբական, հնդկական, ռուսական, իտալական, պարսկական ընտանիքներ՝ կանայք՝ չադրաներով, ահա՝ Վիեննայի «փողոցները», եւ ամենակարկում ձեզ: Վիեննայում նրանք բազմաթիվ են, սա չի նշանակում, որ մարդը չունի անձնական խնդիրներ, որ նա ըստ պահանջի պահում է իր ընտանիքը, բայց, վիեննացի մատուցողը ժպտում է, նա երջանիկ է, եւ ամենակարեւորը՝ նա երջանիկ է, որ սպասարկում է ձեզ:

Դատելով հնչող ծափահարություններից եւ մարդկանց հայացքներից, երջանիկ են նաեւ այն շուրջ 5000 մարդիկ, որոնք Վիեննայի դրամատիկական թատրոնի դիմահայաց հրապարակի առջեւ տեղադրված մեծ էկրանին, համարավեստ աթոռներին նստած, հետեւում էին դասական երաժշտության համերգի: Պատկերացնենք մի պահ, մեր Ազատության հրապարակը, ոչ թե տոնական, այլ սովորական մի օր, օպերայի դիմաց տեղադրվում են, լավ, 1000, լավ, 500 աթոռներ, բոլոր աթոռները կարճ ժամանակ անց զբաղեցվում են, եւ սկսվում է դասական երաժշտության համերգը: Անհնար է պատկերացնելը...ավաղ:

Եվս մի պատկերացնելու բան: Նույն Ազատության հրապարակի

Հին Վիեննան նորի արտացոլանքի մեջ:

Դակաս բաներ

Երեւան-Վիեննա-Երեւան

Աշխարհագրորեն Հայաստանը եվրոպական երկիր է, արժեհամակարգով՝ նույնպես: Մեր երկիրը համաեվրոպական մի շարք կազմակերպությունների անդամ է, որոշների հավակնորդ, մյուսները՝ որպես ուղենիշ ունեցող: Բոլոր այս կազմակերպությունները պարբերաբար պատրաստում են Հայաստանի մասին զեկույցներ, հայտարարություններ, որոնցում նշում են մեր երկրի՝ օրենսդրական, տնտեսական, առհասարակ՝ պետական ոլորտների թերացումները: Մենք՝ մեր հերթին, կամ ընդունում ենք դրանք ու նոր օրենքների տեսքով վերացնում (իսկ այդ օրենքներից շատերը պարզապես Հայաստանի համար չեն-Հ. Ա.), կամ չենք ընդունում եւ փորձում ենք բողարկել, եթե կարելի է ասել՝ թաքցնել դրանք եվրոպական հանրության աչքից:

Սակայն եկեք չխոսենք Եվրոպային հայկական պետության համապատասխանությունից կամ դրա բացակայությունից, փոխարենը... պարզապես կատարենք ճանապարհորդություն՝ Երեւան-Վիեննա-Երեւան:

Միջոցառում փողոցում:

...Մի քանի րոպեից 5000 մարդ էկրանից կիետեւի դասական համերգին:

Ավստրիայի մայրաքաղաք լինելը եւ չի մոռանում ոչ թե անհանդուրժողաբար, այլ սիրալիր, ժպիտով, գեղեցկագույն պատմական հուշարձաններով...:

Երբեւէ հանդիպե՞լ ենք երեւանյան սրճարանում մատուցողի, որի հետ ձեր շփումից եզրակացնեք, որ սիրում է իր գործը եւ հաճույքով է սպասարկում ձեզ: Վիեննայում նրանք բազմաթիվ են, սա չի նշանակում, որ մարդը չունի անձնական խնդիրներ, որ նա ըստ պահանջի պահում է իր ընտանիքը, բայց, վիեննացի մատուցողը ժպտում է, նա երջանիկ է, եւ ամենակարեւորը՝ նա երջանիկ է, որ սպասարկում է ձեզ:

Դատելով հնչող ծափահարություններից եւ մարդկանց հայացքներից, երջանիկ են նաեւ այն շուրջ 5000 մարդիկ, որոնք Վիեննայի դրամատիկական թատրոնի դիմահայաց հրապարակի առջեւ տեղադրված մեծ էկրանին, համարավեստ աթոռներին նստած, հետեւում էին դասական երաժշտության համերգի: Պատկերացնենք մի պահ, մեր Ազատության հրապարակը, ոչ թե տոնական, այլ սովորական մի օր, օպերայի դիմաց տեղադրվում են, լավ, 1000, լավ, 500 աթոռներ, բոլոր աթոռները կարճ ժամանակ անց զբաղեցվում են, եւ սկսվում է դասական երաժշտության համերգը: Անհնար է պատկերացնելը...ավաղ:

Եվս մի պատկերացնելու բան: Նույն Ազատության հրապարակի սրճարանները ոչ թե սրճարան են, այլ մարդկանց բացօթյա հանգստի գոտիներ, նաեւ բացօթյա սննդի գոտիներ, որտեղ մեկ շարքով համարեցված են աշխարհի ժողովուրդների ազգային խոհանոցների տաղավարները՝ չինական, հունական, ճապոնական, ռուսական՝ մեր պարագայում՝ հայկական, վրացական եւ այլն: Իսկ մարդիկ մոտենում են իրենց նախընտրած խոհանոցի տաղավարին, վերցնում իրենց նախընտրած ուտեստը եւ վայելում իրենց հանգիստը՝ համարավեստ սեղանների մոտ, կամ հոսքընկույս, իսկ հետո վերադարձնում սպասքը՝ առանց տարածքը աղտոտելու: Վիեննայում այս հրապարակը դրամատիկական թատրոնի դիմահայացն է, այն նույն հրապարակը, որի առջեւի մասում մարդիկ վայելում են բացօթյա դասական համերգը, սա էլ, ի դեպ, մշակույթն ու ժամանցը մեկտեղելու մասով. ո՞վ է շահում՝ բնակչությունը՝ մարդիկ, ո՞վ է գոհ՝ որպես կանոն շահող կողմը:

Վիեննայում մենք գրեթե չտեսանք գերթանկարժեք մեքենաներ. վարորդները, որպես կանոն, գերադասում են ավելի էժան ու փիչ ծախսատար մեքենաները, ինչը մեզանում «անպատվաբեր» է համարվում: Ակնհայտ չեղանք խցանման, ավտոթարի, փոխարենը տեսանք ինչպես վարորդների, այնպես էլ հետիոտների կողմից երթեւեկության կանոնների պահպանումը: Այդ բազմազգ քաղաքի փողոցներում առհասարակ չնկատեցինք ոստիկանների: Օրինակ՝ մոսկվացի ոստիկանները «բավական գործ» կունենային անելու այնտեղ, որտեղ ավստրիացի ոստիկանները չեն էլ երեւում: Բոլոր փողոցները՝ հստակ ու հասկանալի գրառումներով ցուցանակներով, նույնը վերաբերում է նաեւ Վիեննայում խիստ մեծ պահանջարկ ունեցող մետրոպոլիտենի կանգառներին... Մի խոսքով՝ Ավստրիայի մայրաքաղաքը ստեղծել է բոլոր պայմանները՝ իր բնակիչների ու օտարերկրացիների համար կյանքն ու ժամանցը ավելի դյուրին ու հաճելի դարձնելու համար. Վիեննան արդի Եվրոպայի լիարժեք ներկայացումն է՝ հանդուրժող-ավանդապաշտ:

Բոլոր անցակետերով անցումը տեւեց ընդամենը կես ժամ, եւ մենք արդեն «Ավստրիական ավիաուղիների» ինքնաթիռում ենք՝ Երեւան հետդարձի ճանապարհին:

Օդանավում եվրոպացի՝ հիմնականում Հոլանդիայից տարանցումով Երեւան մեկնող ուղեւորները կրկին զարմացած նայում են հայերիս՝ երբ փորձում էինք խցկել ուղեբեռները նստատեղերի վերեւի դարակներում...:

Երեւան

Անշուշտ մենք չենք մատնանշի բոլոր այն «պակաս բաները», որ ունի եվրոպական քաղաք Երեւանը եվրոպական քաղաք Վիեննայի համեմատությամբ: Պարզապես նկատենք, որ դրանցից շատերը մենք լրացնել կամ ուղղել կարող ենք պարզապես վերաբերմունքի ու աշխարհայացքի փոփոխմամբ, որն ամենեւին էլ չի նշանակում ազգային ավանդույթներից հրաժարում. 21-րդ դարում լիարժեք կանգուն մնացած «Ավստրո-Հունգարիայի մայրաքաղաք» Վիեննան դա ապացուցեց մեզ: Ի դեպ, ոչ ոք չի կարող ասել, թե արդյոք չե՞ն մեղմանա կամ առհասարակ վերանա եվրոպական տարբեր կազմակերպությունների տհաճ զեկույցները Հայաստանի մասին, երբ, օրինակ, երեւանյան տաքսու վարորդը չսիրի ուղեւորին լսել իր երաժշտությունը, իսկ քաղաքի հրապարակներից մեկում գոնե 100 մարդ ուշադրությամբ հետեւեն դասական երաժշտության համերգի:

Ահա Եվրոպան, որն ամենեւին էլ քաղաքներ կամ պետություններ չէ, այլ ազատություն է, քանի որ օրինապահություն է:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ
Վիեննա-Երեւան

Հ. Գ.-Վիեննա կատարած ուղեւորության համար շնորհակալություն ենք հայտնում «Ավստրիական ավիաուղիներ» ընկերությանը, որի բարեկարգ ինքնաթիռները Երեւանից աննկատ դարձրեցին մեր թռիչքը Ավստրիայի մայրաքաղաք եւ հակառակ ուղղությամբ: Հատուկ շնորհակալություն նաեւ ընկերության ներկայացուցիչ Տամարա Կարկուսյանին՝ Վիեննան մեզ ներկայացնելու համար:

2012-ին Կիպրոսի Հանրապետությունը դառնում է ԵՄ-ի նախագահող երկիր

Իսկ վարչապետ Էրդողանը սպառնում է սառեցնել հարաբերությունները եվրոպական այս կառույցի հետ

Երեկ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ուղեւորվեց «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետություն»: Սա վստահության քվե ստանալուց հետո Էրդողանի արտերկիր կատարած առաջին այցն էր, ընդ որում՝ իրականացվում էր թուրքական զորքերի Հյուսիսային Կիպրոս ներխուժման 37-րդ տարելիցին:

Ինչպես հայտնի է, 1974-ի հուլիսի 19-ին թուրքական զորքերը, ներխուժելով Կիպրոս, գրավել էին կղզու տարածքի ավելի քան 36,5 %-ը: Դա համապատասխանում էր հյուսիսային հատվածը Թուրքիային կցելու նպատակով Կիպրոսի մասնատման թուրքական վաղեմի ծրագրին: Այնուամենայնիվ, պետք է ասել, որ այդ ծրագիրը չի արժանանում կիպրացի թուրքերի հավանությանը: Դեռեւս 1974-ին Հյուսիսային Կիպրոսի թուրքական օկուպացումից հետո շուրջ 40 հազ. կիպրացի թուրքեր հեռացել էին կղզուց, մասնավորապես գաղթելով Անգլիա:

Ընթացիկ տարվա հունվարին թուրքական զորքերի Հյուսիսային Կիպրոսից դուրսբերման, Կիպրոսի միասնականության ու ամբողջականության վերականգնման պահանջով նրանք Թուրքիայի ներկայության դեմ հուժկու ցույցեր կազմակերպեցին՝ դատապարտելով միաժամանակ վերջինին Կիպրոսը սեփական քաղաքացիներով վերաբնակեցնելու համար: Այդ ցույցերը կրկնվեցին նաեւ հաջորդ ամիսներին, բայց՝ ապարդյուն:

Թուրքիան ընդամենը 47-ից 37 հազ. է կրճատել Կիպրոսում տեղակայված զորքերի թվակազմը: Գալով թուրք վերաբնակներին, ապա նրանք ներկայումս հյուսիսային հատվածում կազմում են բնակչության 2/3-ը, այսինքն՝ կիպրացի թուրքերը հայտնվել են փոքրամասնության կարգավիճակում:

Ըստ երեւույթին, Թուրքիան Եվրամիության հետ անդամակցության բանակցությունների բարերար ազդեցության տակ Կիպրոսի մասնատման ծրագրի մասին չի խոսում, սակայն հիմա էլ կղզու տարածքում երկու իրավահավասար պետության գաղափարն է առաջ քաշում եւ դա համարում է միակողմանի զիջում՝ պայմանավորված Անկարայի բարի կամքով: Ընդ որում, վարելով հանդերձ անդամակցության բանակցություններ, նա համառորեն չի ճանաչում ԵՄ-ի անդամ Կիպրոսի Հանրապետությանը: Թուրքական նավահանգիստներն առ այսօր փակ են հունական նավերի առջեւ:

Կիպրոսի նկատմամբ բարի կամքի թուրքական դրսեւորման առումով հատկանշական են վարչապետ Էրդողանին հյուսիսային հատված ուղեւորվելուց առաջ Ստամբուլի օդանավակայանում արած հայտարարությունները: Ահա թե, ըստ «Դունյա բյուլյեն» կայքէջի, ինչ է ասել Էրդողանը. «Քանի դեռ ես Թուրքիայի վարչապետն եմ, իմ գրքում լավության մասին այլեւս ոչ մի խոսք չի լինելու: Կիպրոսի առումով մենք բավականաչափ լավություն արդեն արել ենք: Հունական կողմին լավությամբ կպատասխանենք միայն այն դեպքում, եթե լավություն տեսնենք: Շատ պարզ եւ հստակ ասում եմ՝ այլեւս հողային ոչ մի զիջում: Սրանից հետո բանակցությունների սեղանին նստելու ենք բոլորովին այլ դիրքերից: Նրանք նախ պետք է ընդունեն երկու հատվածներում իրավահավասար կարգավիճակով երկու պետության առկայությունը: Կընդունեն, թե ոչ, դա իրենց խնդիրն է: Սակայն ժամանակն էլ սպառվում է: Հարավային Կիպրոսի հունական վարչակարգը առաջիկա տարում վեց ամսով կստանձնի ԵՄ-ի նախագահությունը: Քանի դեռ Հարավային Կիպրոսը ԵՄ նախագահող երկիրն է, մենք եվրոպական այս կառույցի հետ որեւէ փոքր բացարձակապես չենք ունենա: Կսառեցվեն ԵՄ-ի հետ մեր բոլոր հարաբերությունները, եւ վեց ամիս ԵՄ-Թուրքիա փոփոխները չեն լինի: Հույների հետ փոփվելու մասին խոսք լինել չի կարող: Չենք փոփի այն երկրի հետ, որին չենք ճանաչում: Նրանց հետ միեւնույն սեղանին նստելն անգամ անտեղի ենք համարում: Տեսնենք՝ ինչ կանի ՄԱԿ-ը 2012-ին»:

Մինչդեռ Կիպրոսի Հանրապետության ԵՄ-ի նախագահող երկիր դառնալը ոչ թե եվրոպական այս կառույցի անդամների շնորհն է, այլ կանոնադրության պահանջ: Այդ դեպքում նրանք ինչու են հանդուրժում Թուրքիայի ամբարտավանությունը: Դա ունի ընդհանուր եւ մասնավոր պատճառներ նաեւ նախադրյալ այն առումով, որ ԵՄ-ը բանակցություններ սկսելու որոշում է ընդունել այն երկրի հետ, որն ի սկզբանե հրաժարվում էր ճանաչել կառույցի անդամ Կիպրոսի հանրապետությանը:

Ընդհանուր պատճառների մեջ թերեւս պետք է նշել եվրոպական երկրների երկերեսանիությունը, որդեգրած չարանենգ քաղաքականությունն ու ստորությանը հանգեցնող անսկզբունքայնությունը: Ինչ վերաբերում է մասնավոր պատճառներին, ապա դրանց թվում էլ պետք է առանձնացնել Թուրքիայի աշխարհաքաղաքական դիրքը: Այլ կերպ՝ Մերձավոր եւ Միջին Արեւելքում միանձնյա ռազմական ներկայություն ունեցող ԱՄՆ-ն խիստ խանդոտ վերաբերմունք ունի այլ ներկայության հանդեպ: Ամերիկյան այս վերաբերմունքը տարածաշրջան ներթափանցելու առումով ԵՄ-ի համար չափազանց կարեւորում է Թուրքիայի աշխարհաքաղաքական դիրքը: Հետեւաբար, եվրոպական այս կառույցը փոխանակ սկզբունքայնություն դրսեւորելու, իր սկզբունքներին ու կանոնադրությանը հակադրվելու գնով հանդուրժում է ամբարտավանության թուրքական դրսեւորումները: Այլ կերպ՝ տարածաշրջանի նկատմամբ ԱՄՆ-ի խանդոտ վերաբերմունքը պայմանավորում է Թուրքիայի աշխարհաքաղաքական դիրքերի կարեւորությունը ԵՄ-ի համար: Եթե Եվրոպան տեղիք տա թուրքերի պահանջներին եւ Կիպրոսին զրկի ԵՄ-ի նախագահությունն ստանձնելու իրավունքից, հավանաբար կխայտառակվի, բայց ԱՄՆ-ի առջեւ, որը նույնքան երկերեսանի է, չարանենգ եւ ստոր, ինչի մասին հայ ժողովուրդը գիտի սեփական փորձություններից, ընդ որում՝ այդ փորձության սկիզբը դեռեւս 1878-ին Բեռլինում է դրվել:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Բրիտանական թերթին գաղտնալսման մեջ մեղադրած լրագրողը մահացել է

Բրիտանական News of the World թերթի ղեկավարությանը անօրինական գաղտնալսումների խրախուսման մեջ մեղադրած նախկին լրագրողին գտել են մահացած: Խոսքը Շոն Հոարի մասին է, որը «Նյու Յորք թայմս» թերթին տված հարցազրույցում հայտարարել էր, որ News of the World-ում նշանավոր անձանց եւ հանցագործությունների զոհերի ու նրանց հարազատների հեռախոսազրույցների գաղտնալսումները շատ ավելի տարածված են եղել, քան խոստովանել էր խմբագրությունը:

BBC-ն նշում է, որ բրիտանական ոստիկանությունը առայժմ որեւէ ձեւով չի բացատրում Հոարի մահվան հանգամանքները, սակայն լրագրողի մահը կասկածելի չի համարում:

Հեռախոսազրույցների անօրինական գաղտնալսման սկանդալը օրերս հանգեցրեց News of the World-ի փակմանը (դա բրիտանական ամենատարածված թերթերից էր) եւ թերթի հրատարակիչ News Corporation-ի մի քանի ղեկավարների ձերբակալություններին:

Հետզհետե ահագնացող սկանդալը շոշափելի հարված է հասցնում Ռուպերտ Մերդոկի լրատվական կայսրությանը, ինչպես նաեւ վերջինիս հետ բրիտանական վերնախավի կապերին առնչվող մի շարք հարցեր է ծնում:

Ոստիկանությունը հայտարարել է, որ Հոարի մարմինը հայտնաբերվել է Լոնդոնի հյուսիսարեւմտյան արվարձան Ուտֆորդում գտնվող նրա մասնավոր տան մեջ:

Ավելի վաղ BBC-ին տված հարցազրույցում Շոն Հոարը պատմել էր News of the World-ի լրագրողների կողմից հեռախոսազրույցների գաղտնալսման «զանգվածային» բնույթի մասին: Նա թերթի նախկին խմբագիր Էնդի Քոուլսոնին մեղադրել էր, որ նա անձամբ իրեն խնդրել էր հեռախոսազրույցներ գաղտնալսել բացառիկ տեղեկությունների հայթայթման նպատակով:

Ավելի ուշ Էնդի Քոուլսոնը դարձել էր Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Կեմերոնի մամլո քարտուղարը: Ներկայումս նա մերժում է իրեն հասցեագրված մեղադրանքները:

ԴԱՄԱՍԿՈՍ

Սիրիան ճանաչել է Պաղեստինի պետությունը

Սիրիայի կառավարությունը հայտարարել է, որ ճանաչում է Պաղեստինի պետությունը 1967 թ. հունիսի 4-ի սահմաններով եւ Երուսաղեմ մայրաքաղաքով: Այդ մասին հաղորդում է Qudsnet լրատվական գործակալությունը:

Սիրիայի արտգործնախարարության բարձրաստիճան ներկայացուցիչներից մեկը նշել է, որ այսուհետեւ իր երկրի կառավարությունը Դամասկոսում ՊԱԿ (Պաղեստինի ազատագրության կազմակերպության) գրասենյակը կհամարի դեսպանություն:

Պաղեստինյան ինքնավարության ղեկավարությունը մտադրվել է 2011-ի սեպտեմբերին ՄԱԿ-ին դիմել Պաղեստինի պետությանը 1967-ի սահմաններով եւ Երուսաղեմ մայրաքաղաքով ճանաչելու պահանջով: ՊԱԿ-ի պնդման համաձայն, ՄԱԿ-ի անդամ 193 պետություններից 116-ի կառավարությունները պատրաստակամություն են հայտնել պաշտպանելու այդ նախաձեռնությունը:

Դրա հետ մեկտեղ, ԱՄՆ-ը եւ ԵՄ պետությունների մեծամասնությունը դեմ են Պաղեստինի պետության միակողմանի հռչակմանը:

1988-ին ՊԱԿ-ի համապատասխան հայտարարությունից հետո ԽՍՀՄ-ը եւ նրա դաշնակիցները ճանաչեցին Պաղեստինի պետությունը, բայց տվյալ իրադարձությունը որեւէ շոշափելի հետեւանք չունեցավ:

Պ. Ք.

Ամերիկացի դիվանագետները հանդիպել են Քադդաֆիի պատվիրակների հետ

Ամերիկացի մի խումբ դիվանագետներ հանդիպում են ունեցել Լիբիայի ղեկավար Մուամմար Քադդաֆիի պատվիրակների հետ, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը՝ վկայակոչելով ԱՄՆ նախագահի վարչակազմի երկու աղբյուր: Հանդիպման փաստը հաստատել է նաեւ Լիբիայի ղեկավարի մամլո ծառայությունը:

ԱՄՆ վարչակազմի ներկայացուցիչները պատմել են, որ հանդիպումը տեղի է ունեցել շաբաթավերջին «երրորդ երկրի տարածքում»: Հանդիպմանը մասնակցել են ամերիկացի երեք բարձրաստիճան դիվանագետներ, այդ թվում՝ պետքարտուղարի տեղակալ Ջեֆրի Ֆելդմանը, ինչպես նաեւ «Քադդաֆիի չորս մերձավորներ»:

Գործակալության աղբյուրների տվյալներով, հանդիպումը կազմակերպվել էր, որպեսզի «մեկ անգամ եւս պարզ ու հստակ ասվի՝ Քադդաֆին պետք է հեռանա»: Գործակալության զրուցակիցները նշել են, որ հանդիպում անցկացնելու որոշումն ընդունվել էր լոկ այն բանից հետո, երբ ԱՄՆ-ը հուլիսի 15-ին պաշտոնապես ճանաչել էր ապստամբների Ազգային անցումային խորհուրդը որպես Լիբիայի միակ օրինական իշխանություն: Ընդգծվում է, որ Քադդաֆիի ներկայացուցիչների հետ որեւէ նոր հանդիպում չի նախատեսվում:

Քադդաֆիի մամլո ծառայությունը իր հերթին հայտարարել է, որ Թունիսում կայացած հանդիպման ընթացքում քննարկվել են Տրիպոլի-Վաշինգտոն երկկողմ կապերի վերականգնման ուղիները: Որեւէ այլ մանրամասնություն չի հաղորդվել:

Ավելի վաղ՝ հուլիսի 11-ին ալժիրյան «Էլ Խաբար» թերթում հրապարակվել էր Մուամմար Քադդաֆիի որդու՝ Սեյֆ ալ Իսլամի հարցազրույցը, որտեղ նա պատմել էր, որ Տրիպոլիի ներկայացուցիչները բանակցում են Ֆրանսիայի ղեկավարության հետ: Պաշտոնական Փարիզը Քադդաֆիի որդու հայտարարությունը չէր մեկնաբանել, բայց հրապարակումից մեկ օր անց Ֆրանսիայի արտգործնախարարը անուղղակիորեն հաստատել էր բանակցությունների փաստը: Ընդսմին նա հայտարարել էր, որ բանակցություններում քննարկվում է Քադդաֆիի պաշտոնաթողության հարցը, ինչպես նաեւ հայտնել էր, որ Տրիպոլիի պատվիրակները կարող են հաստատել ոչ միայն Ֆրանսիայի, այլեւ ԱՄՆ-ի եւ Թուրքիայի իշխանությունների հետ:

Իսպանիայում բացահայտվել է Եվրոպայում թմրադեղ վաճառող խոշորագույն խմբավորումը

Իսպանիայի ոստիկանությունը բացահայտել է եվրոպական խոշորագույն հանցավոր խմբավորում, որի մասնակիցները զբաղվում էին թմրադեղերի շրջանառությամբ եւ փողերի լվացմամբ: Այդ մասին հաղորդում է «Էլ Մունդո» թերթը:

Հանցագործների ձերբակալման գործողությունը իսպանացիներն իրականացրել են ամերիկյան ՀԴԲ-ի եւ Մայամիի դատախազության հետ համատեղ: Ընդհանուր առմամբ կալանավորվել է 20 մարդ, այդ թվում՝ 16-ը Իսպանիայում եւ 4-ը ԱՄՆ-ում:

Մադրիդում առանձնատներից մեկի խուզարկության ժամանակ ոստիկանները գտել են երկու գաղտնարան, որտեղ թաքցված էր 25 մլն եվրո կանխիկ դրամ: Ոստիկանության ներկայացուցիչները հայտարարել են, որ դա երբեւիցե միանգամից առգրավված ամենախոշոր գումարն է: Բացի դրանից, իշխանությունները Եվրոպայում եւ ԱՄՆ-ում կալանել են խմբավորման անդամներին պատկանող անշարժ կայքը: Այն գնահատվում է 75 մլն եվրո:

«Էլ Պաիս» թերթի հաղորդման համաձայն, ԱՄՆ-ում ձերբակալված 4 անձանցից մեկը խմբավորման պարագլուխ, 36-ամյա Ալվարո Լոպես Տարդոնն է, որն անցյալում այսպես կոչված «Մայամիի ելուզակախմբի» (բացահայտվեց 1996-ին) անդամ էր: Այդ հանցախմբի մասնակիցները էքստազի էին վաճառում Մադրիդի դիսկո-ակումբներում:

Լոպես Տարդոնի եւ նրա եղբայր Արտեմիոյի (ձերբակալվեց նրա հետ մեկտեղ) խմբավորումը Իսպանիա էր հասցնում կոլումբիական կոկաին: Իսպանիայի ոստիկանության կայքում հրապարակված հայտարարության մեջ ասվում է, որ հանցախումբն օգտագործում էր Եվրոպայով անցնող տարանցիկ չվերթեր եւ օգտվում էր ԵՄ քաղաքացիների ծառայություններից: Դա արվում էր մանրակրկիտ ստուգումներից խուսափելու նպատակով, որոնց Իսպանիայի օդանավակայաններում ենթարկվում են լատինամերիկյան երկրներից եկող ուղիղ չվերթերի բոլոր ուղեւորները:

Արտեմիո Լոպես Տարդոնը մշտապես բնակվում էր Իսպանիայում եւ պատասխանատու էր կոկաինի վաճառքի համար: Նա փողերն ուղարկում էր Մայամի, որտեղ իր եղբայր Ալվարոն դրանք ներդնում էր անշարժ կայքի եւ բարձրակարգ ավտոմեքենաների մեջ: Խմբավորումից առգրավված 60 մեքենաների մեջ կա, օրինակ, Ford Cobra ավտոմեքենա 2 մլն եվրո արժողությամբ: Այժմ Տարդոն եղբայրներին 20 տարվա բանտարկություն է սպառնում փողերի լվացման եւ թմրադեղերի տարածման համար:

«Ամառային տաղ» խորագրով ցուցահանդեսը կբացվի հուլիսի 22-ին նկարիչների միությունում

«Ամառային տաղ». այս խորագիրն է կրում տասնամյակներ շարունակ սերտ բարեկամություն անող չորս գեղանկարիչների խմբակային ցուցահանդեսը, որը կբացվի Երեւանի նկարիչների միության մեծ սրահում հուլիսի 22-31-ը: Իսկ թե ինչու «Ամառային տաղ», **«Ազգի»** այս հարցին պատասխանեցին. «Այդ խորագրով ցանկացել ենք գույների համադրությամբ ու հրավառությամբ, թեմաների բազմազանությամբ ամառվա այս տաղը փոքր-ինչ մեղմացնել՝ ցուցասրահ հրավիրելով ու գեղեցիկի ախորհը մատնանշելով»:

80-ականների սերնդի ներկայացուցիչներից չորս անբաժան գեղանկարիչների համար այս տարին հոբելյանական է եւ, կարծես, այս ցուցահանդեսն էլ ինչ-որ չափով տոնական բնույթ է կրում: Ներկայացնեմ նրանց՝ Սարգիս Աբրահամյանի 65-ամյակն է, Վլադ Սողոմոնյանի՝ 60, Սեյրան Գասպարյանի՝ 55 եւ Աշոտ Ազատյանի՝ 50: Այս խմբակային ցուցահանդեսը անցկացվում է ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո: Հոբելյարները հաճախել են Փանոս Թերլեմեզյանի անվան նկարչական քոլեջը, այնուհետեւ սովորել Երեւանի գեղարվեստի ինստիտուտի գեղանկարի ու դեկորատիվ կիրառական արվեստի բաժիններում:

Սեյրան Գասպարյանը ունեցել է գեղանկարի եւ դեկորատիվ կիրառական արվեստի, ու նաեւ գրաֆիկայի 6 անհատական ցուցահանդես: Այս ցուցահանդեսին Ս. Գասպարյանը ներկայացրել է 25 գեղանկար եւ գրաֆիկա, նույնքան էլ դեկորատիվ արվեստի նմուշներ: Բացի Հայաստանից ունեցել է անհատական ու խմբակային ցուցահանդեսներ Կանադայում, Վարշավայում, Գդանսկում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Ուկրաինայում: Այժմ դասավանդում է Փ. Թերլեմեզյանի անվան նկարիչների քոլեջում եւ Նոր Նորքի գիտաարտադրական ուսումնական կենտրոնում:

Սարգիս Աբրահամյանը մի քանի տասնյակ անհատական եւ խմբակային ցուցահանդեսներ է ունեցել Հայաստանում եւ արտերկրում: Նրա գեղանկարներում ու գրաֆիկական գործերում հիմնականում ռեալի եւ աբստրակտի, վերացականի սինթեզի ոճերի խառնուրդներն են վառ արտահայտված: Դեռ մանկուց նա սիրել ու հրաղուրվել է հայրենի բնությամբ, որն էլ դարձել է նրա ներշնչանքի ու ստեղծագործությունների հիմնաքարը: Ցուցահանդեսին Սարգիս Աբրահամյանը ներկայացրել է 25 գեղանկարչական եւ գրաֆիկական գործեր՝ յուղաներկով եւ պաստելով արված:

Վլադ Սողոմոնյանի գեղանկարները գունային գամմաների համադրության մի տոնախմբություն են հիշեցնում, մոդեռն ավանգարդիստական պատկերներով: Նկարիչը դասավանդում է Հենրիկ Իգիթյանի անվան մանկական գեղագիտական կենտրոնում, նաեւ Սեւանի գեղարվեստի դպրոցում, դասավանդելով նկարչություն եւ գրաֆիկա առարկաներ:

Աշոտ Ազատյանն այս անբաժան ընկերության ամենակրտսեր անդամն է: Նրա ստեղծագործություններում առկա են ռեալիզմի ու երեւակայականի զուգորդումը: Ազգային արժեքներն ու ավանդույթներն իենց ուրույն տեղն ունեն Աշոտի ստեղծագործություններում: Իսկ նրա նատյուրմորտների ու բնապատկերների շարքը առանձնահատուկ է: Աշոտ Ազատյանի անհատական ցուցահանդեսները մեր երկրում ու նաեւ արտերկրում հիացրել ու գրավել են այցելուներին:

Անբաժան այս գեղանկարիչների խմբակային ցուցահանդեսը ինչ-որ չափով նրանց միասնական մտածելակերպի արտահայտությունն է, որ զգացվում է նրանց ստեղծագործություններում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Կայացավ Սարգիս Կիրակոսյանի թարգմանությամբ «Մայրիներուն ծիածանը» գրքի շնորհանդեսը

Երեկ, Հայաստանի գրողների միությունում կայացավ լիբանանահայ գրող, բանաստեղծ, բազմաթիվ գրքերի հեղինակ ու թարգմանիչ **Սարգիս Կիրակոսյանի** «Մայրիներուն ծիածանը» լիբանանյան արդի 7 բանաստեղծների գործերի թարգմանված ժողովածուի շնորհանդեսը: **«Ազգ»**-ի հետ զրույցում որն Կիրակոսյանը, պատասխանելով այն հարցին, թե ինչպես մտահղացավ այս գաղափարը, ասաց. «Այս գիրքը 40 տարիների թարգմանական փորձերու մեկեղեղումն է: Առաջին թարգմանությունները սկսած եմ 1973-ին, անկե ետ «Բագին» ամսագրին մեջ հրատարակված են հաջորդաբար թարգմանություններս: Բայց գիրքը գիրք դարձավ վերջին 4-5 տարիներուն որն Լեւոն Անանյանի հեսեւողական հետաքննդումներով, ծրագրված աշխատանքով եւ խմբագրությամբ»: Հեղինակը նշեց նաեւ, որ այդ յոթ բանաստեղծները յուրովի ներկայացնում են յոթ գույն, յոթ աշխարհ, կարծես պատկերում են լիբանանյան արդի գրականության ծիածանը:

Շնորհանդեսին բացման խոսքով հանդես եկավ գրող Հովհաննես Գրիգորյանը եւ բարձր գնահատեց նման ժողովածուի հրատարակությունը:

ԳՄ նախագահ Լեւոն Անանյանը բարձր գնահատելով լիբանանահայ գրող Սարգիս Կիրակոսյանի գրական վաստակը, ԳՄ վարչության որոշմամբ՝ նրան հանձնեց «Գրական վաստակի համար» մեդալը:

Այնուհետեւ Սարգիս Կիրակոսյանի ժողովածուի մասին Լիբանանի արդի բանաստեղծների ու գրքում զետեղված գրողների երկու սերունդների ստեղծագործություններին վերլուծաբար անդրադարձան բանախոսներ Երվանդ Տեր-Խաչատրյանը, Արտեմ Հարությունյանը, Դավիթ Հովհաննեսը, գրականագետներ Դավիթ Գասպարյանն ու Սուրեն Աբրահամյանը: Գրքում զետեղված բանաստեղծություններից մի փունջ ասմունքեցին Սիլվա Յուզբաշյանը եւ Արման Նավասարդյանը:

Շնորհանդեսը ամփոփվեց Սարգիս Կիրակոսյանի շնորհակալական խոսքով, որն ուղղված էր գրքի խմբագիր Լեւոն Անանյանին, պետպատվերով ու Պուրճ Համուտի քաղաքապետարանի աջակցությամբ տպագրված լիբանանյան արդի բանաստեղծներ՝ Աշոնիս (Ալի Ահմէտ Սա՝ԻՏ), Եուսէֆ էլ Խալ, Շաուգի ադի Շարբա, Ունսի էլ-Հաժ, Փոլ Շավուլ, Ադոնաս Պայտուն, Ուսիի Սաաստ, գործերի թարգմանության՝ Երեւան-Բեյրութ ՀԳՄ հրատարակչությանը: «Այս գիրքը եօթներանգ ու եօթնաբոյր գեղահիւս ծիածան մըն է, որ, կը հավատանք, այս հատընտիրի էջերէն բանաստեղծութիւն առ բանաստեղծութիւն հրաշափառ վեր բարձրանալով՝ Սաննինի ձիւնապսակ կատարը ոտի կամրջէ Արարատի աստուածամերձ գագաթին ու ոտի ըլլայ լիբանանցի եւ հայ երկու բարեկամ ժողովուրդները ա՛լ ավելի իրարու մօտեցնող, մէկ ոսկի տակ եղբայրացնող թագ ու ծիածան», ասաց Սարգիս Կիրակոսյանը եւ ընծայագրեց գրքերը:

Մ. Մ.

«Marie Claire Travel» ամսագիրը հրապարակել է Հայաստանի մասին

«Marie Claire Travel» հայտնի ամսագրի իտալական տարբերակը 2011-ի հուլիս-օգոստոս համարում Հայաստանի մասին հոդված է հրապարակել: Այս մասին տեղեկացանք արտաքին գործերի նախարարությունից: «Ուր շնչում են քարերը. ուխտագնացություն դեպի քրիստոնեական Հայաստանի սիրտը» խորագրով հոդվածը զբաղեցրել է ամսագրի 20 էջը: Հոդվածն անդրադառնում է հայկական պատմամշակութային ու հոգեւոր ժառանգությանը: Ամսագրում տպագրվել են նաեւ լուսանկարներ ու տեղեկատվություն Հայաստան այցելող զբոսաշրջիկների համար:

Ի. Պ.

ԱՆՈՐԴԱՐ ԵՎ ԱՆԱՁԵՎ

Անվանի դերասանուհի Դոնարա Մկրտչյանին վերջին հրաժեշտ տալուց զրկեցին մեզ

«Ազգը» երեկվա համարում անդրադարձել էր մայր թատրոնի անվանի դերասանուհի Դոնարա Մկրտչյանի մահվանը, միաժամանակ ընդգծելով արտիստուհու վաստակը հայ թատրոնի պատմության մեջ, կերպարների նրբին ու գյուտրեցուն հատուկ կոլորիտային մեկնաբանությամբ:

Երեկ ամբողջ օրվա ընթացքում խմբագրատան հեռախոսը հանգիստ չէր մնում, եւ զանգահարողները ցավով էին նշում դերասանուհու կորուստն ու խնդրում տեղեկացնել նրա հուղարկավորության տեղի ու ժամի մասին: Սակայն զարմանքից աղբեցինք, երբ փորձեցինք մենք էլ տեղեկանալ: Պարզվեց, որ Սեւանի հոգեբուժարանի ղեկավար Գագիկ Կարապետյանը դերասանուհու մահվան լուրը հայտնել է հանգուցյալի խաղընկերներին: Սակայն երկու օր որեւէ արձագանք չի եղել: Եվ որն Կարապետյանը անձամբ է կազմակերպել դերասանուհու հոգեհանգստի, հոգեհացի բոլոր արարողությունները (իրենց հաստատության բյուջեից): Դերասանուհու խաղընկերները տարբեր այլաններ աղմուկ են բարձրացրել, որ Դոնարա Մկրտչյանի դագաղը բերվի Երեւան եւ ինչպես հարկն է վերջին հրաժեշտ տան անվանի դերասանուհուն: Սակայն փոխարենը մի քանի արվեստագետներ գնացել են Սեւան, մասնակցել հոգեհանգստի կարգին, ամբողջը բերել Երեւան ու սուստուփուս՝ 10 հոգով հողին հանձնել Սպանդարյանի գերեզմանատանը: Այդ լուրը ցնցել է դերասանուհու հարազատներին, երկրպագուներին, խաղընկերներին ու մայր թատրոնի անձնակազմին, որոնց ներկայացուցիչները եկել էին խմբագրություն ու իրենց զայրույթի ձայնն էին ուզում բարձրացնել այդ անարդար, անազնիվ քայլի համար, որոնք ինչ-ինչ հանգամանքներից ելնելով չեն ցանկացել անգամ մեզ հնարավորություն տալ սիրված, բայց ողջ կյանքում դժբախտ դերասանուհուն վերջին հրաժեշտը տալու:

Մ. Մ.

«Հայկական համայնապատկեր» մրցույթի հաղթողը «Փառատոնի նոր անուն»-ն է

Ինչպես տեղեկացրել էինք նախորդ համարում, «Ոսկե ծիրան» 8-րդ երեւանյան միջազգային կինոփառատոնի շրջանակում Բրիտանական խորհրդի հայտարարած «Փառատոնի նոր անուն» մրցանակը շնորհվել է **Հարություն Շահյանին**: Երիտասարդ ռեժիսորի «Բեռնելով կյանքս» ֆիլմը ցուցադրվել էր փառատոնի «Հայկական համայնապատկեր» մրցույթի շրջանակում: Ֆիլմը դարձել է «Հայկական համայնապատկեր» մրցույթի հաղթողը եւ արժանացել նաեւ «Նուարդ» մրցանակին:

Հարություն Շահյանը նոյեմբերի 16-20-ը Բրիտանական խորհրդի աջակցությամբ կմասնակցի Բրիստոլում անցկացվող Encounters միջազգային կինոփառատոնին եւ կներկայացնի իր ֆիլմը: «Ռեժիսորի համար կարեւոր է շրջագայելը եւ նոր երկրներ այցելելը: Միացյալ Թագավորությունում անցկացվող փառատոնին մասնակցելը էական է ոչ միայն նոր կապերի ստեղծման, այլեւ այդ երկրի կինոարտադրությանն ու նորարարություններին ծանոթանալու համար», ասաց Հարություն Շահյանը:

Ֆիլմի ստեղծման աշխատանքները տեւել են մեկ տարի: «Բեռնելով կյանքս» ֆիլմը ռեժիսորի դիպլոմային աշխատանքն է: Այն նկարահանվել է սիրողական տեսախցիկով. ֆիլմի թե՛ օպերատորը եւ, թե՛ գլխավոր դերակատարը ռեժիսորն է: Այն ուսանողի, երիտասարդ ընտանիքի տղամարդու, հիվանդի անելանելի վիճակի մասին է: Հերոսը փորձում է կյանքի մեջ լուսավոր կետեր փնտրել: Զինվորական ծառայությունն ավարտելուց մի քանի օր առաջ հիվանդանում է շիզոֆրենիայով, եւ նրան՝ որպես զինծառայությանը ոչ պիտանի զինվորի, զորացրում են: Այստեղից էլ սկսվում են բոլոր խնդիրները: Ինստիտուտ, ընտանիք, երեխա, ամենօրյա պարտադիր ուսկումներ: Դեղ գնելու հնարավորություն չունեցող երիտասարդը ստիպված է դիմել հանցագործության: Պարտքեր, աշխատանքի որոնում, միամիտ եւ անզգույշ քայլեր, որոնք բանս ընկնելու իրական նախադայմաններ են:

«Նման պատմություններ ամեն օր տեղի են ունենում մեր կողքին: Հորինված ոչինչ չեք գտնի ֆիլմում: Հատուկ եմ ֆիլմը սիրողական տեսախցիկով նկարահանել: Հակառակ դեպքում այն համոզիչ եւ անկեղծ չէր ստացվի», ասաց Հարություն Շահյանը:

Հարությունը ավարտել է Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի խաղարկային ֆիլմերի ռեժիսուրայի բաժինը:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

«Խաղաղության լաստերներ»

Հուլիսի 20-ին, ժամը 19:00-ին Գեղագիտության ազգային կենտրոնում (Բայրոն 1/1 հասցեով) «Խաղաղության լաստերներ» ծրագրի շրջանակներում տեղի կունենա միջոցառում նվիրված Հիրոսիմա եւ Նագասակի քաղաքներում ատոմային ռմբակոծումից տուժածներին, ինչպես նաեւ 2011 թ. մարտի 11-ի երկրաշարժի զոհերի հիշատակին:

Հայ մանուկների նկարազարդ լաստերները եւ 5000-րդ կռունկը 5-րդ անգամ Երեւանից կուղեւորվի Հիրոսիմա, որտեղ ճապոնացի երեխաների ձեռքերով կհանձնվեն ջրին:

Միջոցառմանը ներկա են լինելու ՀՀ Արտաքին գործերի նախարարության Ասիայի, Օվկիանիայի եւ Աֆրիկայի վարչության պետ՝ Աշոտ Ոսկանյանը եւ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի ծրագրերի համակարգողը:

Միջոցառման կազմակերպիչներն են Գեղագիտության ազգային կենտրոնը եւ «Հիկարի» կենտրոնը:

Սարական ոչ-ոքի ռուսների հետ սկզբունքային մրցավեճում

Արոնյանն այս անգամ թիմին փրկեց պարտությունից

Չինաստանում ընթացող շախմատի աշխարհի թիմային 8-րդ առաջնության 3-րդ տուրում ուշադրության կենտրոնում մրցաշարի առաջատարներ Ռուսաստանի եւ Հայաստանի հավաքականների մրցավեճն էր: Սկզբունքային նշանակություն ունեցող այդ մրցավեճի ելքը շատ բանով կարող էր կանխորոշել մրցանակային տեղերի համար մղվող պայքարի ընթացքը: Համառ ու անզիջում պայքարում անցած այդ մրցախաղում հայ շախմատիստները գործող չեմպիոնի հետ ոչ-ոքի խաղացին:

Առաջինն իր հանդիպումն ավարտեց 2-րդ խաղատախտակի վրա խաղացող Սերգեյ Մովսիսյանը՝ արդեն 24-րդ քայլին հաշտություն կնքելով Ալեքսանդր Գրիշչուկի հետ: Որոշ ժամանակ անց Սերգեյի օրինակին հետեւեց Վլադիմիր Հակոբյանը՝ միավորը 32-րդ քայլին կիսելով Յան Նեպոմնյաչնու հետ պայքարում:

Մյուս երկու պարտիաներում ավելի համառ պայքար ընթացավ: Գաբրիել Սարգսյանը սեւերով 50-րդ քայլին պարտվեց Պյոտր Սվիդլերին եւ դժվարին կացության մեջ դրեց մեր թիմին: Այժմ մրցախաղի ելքը կախված էր Արոնյան-Կարյակին պարտիայից: Հայաստանի հավաքականի առաջատարն այս անգամ իրեն հիանալի դրսեւորեց եւ կարողացավ ի վերջո իրացնել առավելությունը: 74-րդ քայլին Սերգեյ Կարյակինը սխիլված էր ընդունել պարտությունը: Այս հաղթանակի շնորհիվ Հայաստանի հավաքականը խուսափեց պարտությունից եւ մրցախաղն ավարտեց ոչ-ոքի: Արոնյանն այս հաղթանակով կարծես խզեց նախորդ օրվա իր մեղքը, երբ պարտվելով Գասա Կամսկուն, մեր թիմին զրկել էր հաղթանակից:

Ադրբեջանի հավաքականն անդրանիկ պարտությունը կրեց՝ 1,5-2,5 հաշվով զիջելով Հունգարիայի ընտրանուն: Թիմի հաղթանակն ապահովեց մրցաշարի միակ կին մասնակից Հուդիթ Պոլգարը՝ պարտության մատնելով Ռաուֆ Մամեդովին: Մյուս պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

ԱՄՆ-ի հավաքականը 3,5-0,5 հաշվով հաղթեց Եգիպտոսի շախմատիստներին: Իսրայելի հավաքականի հաղթանակը չինացի շախմատիստների նկատմամբ (2,5-1,5) ապահովեց Թամիր Նաբատին՝ առավելության հասնելով Լիրեն Դինգի նկատմամբ: Ուկրաինայի հավաքականն էլ նույնպիսի հաշվով պարտության մատնեց հնդիկներին: Այստեղ վճռորոշ էր Ալեքսանդր Մոիսեենկոյի հաղթանակը Գոպալի նկատմամբ:

3 տուրից հետո աղյուսակը 5 միավորով գլխավորում են ռուսները: Հայաստանի հավաքականը 4 միավորով 2-րդ տեղում է եւ բոլոր պարտիաներում վաստակած միավորների ընդհանուր քանակով (7,5) գերազանցում է նույնպիսի արդյունք ունեցող Ուկրաինայի եւ Իսրայելի ընտրանիներին: 4-րդ տուրում Հայաստանի հավաքականը կմրցի մրցաշարի հեռնաթահ Եգիպտոսի շախմատիստների հետ, որոնք պարտվել են 3 մրցախաղերում էլ: Այնպես որ հայ շախմատիստները պետք է ձգտեն հնարավորինս խոշոր հաշվով հաղթանակ տոնել:

Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստը կորոշվի օգոստոսի 25-ին

Ինչպես հայտնի է, ՈՒԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինիի առաջարկով այս տարվանից հատուկ մրցանակ է սահմանվել Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի համար: Պատճառն այն է, որ «Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթի սահմանած «Ոսկե գնդակ» մրցանակն անցյալ տարվանից միավորվեց ՖԻՖԱ-ի կողմից ամենալավագույն ֆուտբոլիստին տրվող մրցանակի հետ:

ՈՒԵՖԱ-ի սահմանած նոր մրցանակի առաջին դափնեկիրի անունը հայտնի կդառնա օգոստոսի 25-ին Մոնակոյում կայանալիք մրցանակաբաշխության ժամանակ: Այդ օրը տեղի կունենա նաեւ չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի մասնակիցների վիճակահանությունը:

Մրցանակին կարող են հավակնել անկախ ազգությունից այն ֆուտբոլիստները, որոնք հանդես են եկել նախորդ մրցաշրջանում եվրոպական ակումբներում: Հաշվի են առնվելու ֆուտբոլիստների ելույթներն ակումբի եւ հավաքականի կազմերում:

ՈՒԵՖԱ-ի անդամ 53 երկրներից յուրաքանչյուրից լավագույն ֆուտբոլիստի ընտրության մրցույթին կմասնակցի մեկ լրագրող: 53 լրագրողները կանվանեն լավագույն ֆուտբոլիստների իրենց եռյակները: Հարցաթերթիկում առաջինը նշված ֆուտբոլիստը կստանա 5 միավոր, 2-րդը՝ 3, 3-րդը՝ 1: Առավելագույն միավորներ վաստակած 3 ֆուտբոլիստները պայքարը կշարունակեն 2-րդ փուլում: Այդ փուլի քվեարկությունը տեղի կունենա Մոնակոյում օգոստոսի 25-ին: Ուղիղ եթերում լրագրողները կքվեարկեն էլեկտրոնային հատուկ համակարգի միջոցով:

Առաջին փուլի քվեարկությունն արդեն ընթացքի մեջ է: Հուլիսի 25-ին ՈՒԵՖԱ-ի պաշտոնական կայքում կհրապարակվեն քվեարկության ամբողջական արդյունքները եւ հայտնի կդառնան մրցանակի 3 հավակնորդները:

Սամվել Մելքոնյանը կխաղա «Միկայում»

Նորվեգական «Վոլերենգայի» հետ պատասխան խաղից առաջ «Միկայի» կազմը համալրեց «Բանանցի» նախկին ֆուտբոլիստ Սամվել Մելքոնյանը: Վերջինս առաջնության մեկնարկում հեռացվել էր «Բանանցից» ու անհատապես էր մարզվում, մինչեւ որ նոր ակումբ գտներ: Նա մտադիր էր կարիերան շարունակել արտերկրում: Այդ նպատակով մեկնել էր Իրան, սակայն որոշեց մնալ Հայաստանում՝ ընդունելով «Միկայի» հրավերը, որի հետ մինչեւ այս մրցաշրջանի ավարտը պայմանագիր է կնքել:

Հայկանուշ Բեգլարյանը չարդարացրեց սպասելիքները

Չեխիայի Օստրավա քաղաքում անցկացված թեթեւ atլետիկայի մինչեւ 23 տարեկանների Եվրոպայի երիտասարդական առաջնությունում Հայաստանի միակ ներկայացուցիչ Հայկանուշ Բեգլարյանն անհաջող ելույթ ունեցավ: Եռացատկում ցույց տալով 12 մ 46 սմ արդյունք, հայ մարզուհին գրավեց 21-րդ տեղը ու չկարողացավ մտնել եզրափակիչ փուլ:

Հայ թեթեւատլետների համար հաջորդ փորձությունը տեղի կունենա հուլիսի 21-24-ը Տալլինում, որտեղ կանցկացվի Եվրոպայի պատանեկան առաջնությունը: Հայաստանն այդ մրցումներում կներկայացնի հեռացատկորդ Գոռ Ներկարարյանը:

Գոլազուրկ ոչ-ոքի

Ավանի ֆուտբոլի ակադեմիայում ուսումնամարզական հավաք անցկացնող Իրանի «Մեսը» ստուգողական 2-րդ խաղում ուժերը չափեց «Ուլիսի» հետ: Այս անգամ դարպասները մնացին անառիկ: Հիշեցնենք, որ առաջին խաղում «Մեսը» 0-3 հաշվով զիջել էր «Բանանցին»:

Ջենայը հայտ է ներկայացրել

Հնդկաստանի Ջենայ քաղաքը պաշտոնական հայտ է ներկայացրել ՖԻԴԵ 2012-ի գարնանը Վիշվանաթան Անանդի եւ Բորիս Գելֆանդի մրցախաղը կազմակերպելու համար: Հիշեցնենք, որ աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար կայանալիք այդ մրցախաղի անցկացման առաջին հայտը ներկայացրել էր Մոսկվան: Մրցախաղի անցկացմամբ շահագրգռված են նաեւ Լոնդոնն ու Մինսկը: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը հուլիսի 31-ն է: Օգոստոսի 1-ին ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովը պաշտոնապես կհայտարարի Անանդ-Գելֆանդ մրցաշարի անցկացման վայրը:

Մնեյդերը կտեղափոխվի «Մանչեսթր Յունայթեդ»

«Մանչեսթր Յունայթեդն» ու «Ինտերը» համաձայնության են եկել վերջինիս կիսապաշտպան Վեսլի Սնեյդերի տրանսֆերի հարցում: Անգլիական ակումբը պատրաստ է 27-ամյա հոլանդացու համար 35 մլն ֆունտ ստեռլինգ վճարել: Սնեյդերի շաբաթական աշխատավարձը կկազմի 190 հազար ֆունտ ստեռլինգ: Գործարքը կկայանա մոտ օրերս:

ԲՈՔՍԱՄԱՐՏ

Արթուր Աբրահամը վերադառնում է միջինքաշային կարգ

Հաշվի առնելով իր պրոմոութերների կարծիքը, Արթուր Աբրահամը որոշել է վերադառնալ միջինքաշային կարգ, որպեսզի շարունակի մարզական կարիերան:

«Ինձ առայժմ վաղ է շարից հանելը: Վերջին պարտությունները չեն նշանակում, թե այլեւս ռինգում ակնկալիքներ չունեմ: Ցանկանում եմ ապացուցել, որ դեռեւս կարող եմ վերադառնալ», հայտարարել է 31-ամյա բոնցքամարտիկը:

Նշենք, որ միջինքաշային կարգում Արթուր Աբրահամն անպարտելի էր եւ բավական երկար ժամանակ կրում էր IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Իսկ ահա նրա տեղափոխությունը 2-րդ միջինքաշային կարգ անհաջող էր: Նա այդ քայլին գնաց, որպեսզի մասնակցի Super Six մրցաշարին: Սակայն այստեղ Արթուրն անհաջողության մատնվեց: Անդրե Ուորդից կրած պարտությունից հետո Աբրահամի պրոմոութեր Վիլֆրիդ Զաուեռլանդը նշել էր, որ ավելի լավ կլիներ, եթե Արթուրը շարունակեր ելույթները միջինքաշային կարգում:

Այժմ Արթուրի պրոմոութերները մշակել են միջինքաշային կարգ վերադառնալու ծրագիր, որը ներառում է նրա անձնական քաշի աստիճանական նվազեցում: Դա պետք է իրականացվի սննդի բնագավառի մասնագետի օգնությամբ:

«Մենք Արթուրին նոր հնարավորություն ենք ընձեռում: Նախապատրաստական 2-3 մենամարտերի շնորհիվ նա պետք է աստիճանաբար վերադառնա իր նախկին քաշին: Նման առաջին մենամարտը կկայանա նոյեմբերին: Այս ծրագիրը կիրականանա միայն դիետոլոգի օգնությամբ, ընդ որում Արթուրը պետք է խստորեն կատարի նրա բոլոր պահանջները», նշել է Զաուեռլանդը:

Նշենք, որ նախկինում Աբրահամը մշտապես խնդիրներ է ունեցել քաշ գցելիս, ուստի այժմ թիմում կաշխատի դիետոլոգ:

Հայ շախմատիստներից լավագույնը Գոռ Թադեւոսյանի արդյունքն է

Փոթիում վերջնագիծը հասել վրացի հանրահայտ շախմատիստուհի Նանա Ալեքսանդրիայի գավաթի խաղարկությունը, որն անցկացվեց տարիքային 4 խմբերով: Հայաստանից մրցաշարին մասնակցեցին 44 շախմատիստներ: Հայ շախմատիստներից առավել հաջող հանդես եկավ մինչեւ 10 տարեկան տղաների մրցաշարի մասնակից Գոռ Թադեւոսյանը: Նա 9 հնարավորից վաստակեց 7 միավոր եւ միայն լրացուցիչ գործակիցներով 1-ին տեղը զիջեց Վրաստանի ներկայացուցիչ Ծոթնե Մամուլայշվիլուն: Գոռը վերելքով անցկացրեց ողջ մրցաշարը, իսկ վերջնագծում պարզապես անկասելի էր՝ տոնելով 4 անընդմեջ հաղթանակ՝ հաջորդաբար պարտության մատնելով Կոբա Ջոկուրիին, Արշիլ Մեմարնիշվիլուն, Գեորգի Ինանեյշվիլուն եւ Նիկոլոզ Պետրիաշվիլուն: Գոռը Ավանի շախմատի մասնագիտացված մարզադպրոցի սան է (մարզիչ՝ Արշակ Հունանյան, տնօրեն՝ Դավիթ Հունանյան): Նա 2 տարի անընդմեջ ճանաչվել է Ավան համայնքի շախմատի առաջնության չեմպիոն մինչեւ 10 տարեկանների միջեւ: Նա թոռն է մեր աշխատակցուհի Մարիետա Մակարյանի, որին շնորհավորում ենք այս առթիվ:

Հայ շախմատիստներից եւս երկուսը՝ Անահիտ Մկրտչյանը (մինչեւ 8 տարեկաններ) եւ Դավիթ Քալաշյանը (բաց մրցաշար) վաստակեցին 7-ական միավոր: Անահիտը մինչեւ 8 տարեկանների մրցաշարում գրավեց 3-րդ տեղը: 6 միավորով 4-րդ հորիզոնականը զբաղեցրեց Մանե Հովհաննիսյանը:

Դավիթ Քալաշյանը բաց մրցաշարում գրավեց 4-րդ տեղը: Այստեղ հաղթող ճանաչվեց վրացի Գայոզ Նիգալիձեն, որը վաստակեց 7,5 միավոր ու լրացուցիչ գործակիցներով գերազանցեց նույնպիսի արդյունքի հասած ադրբեջանցի Զաուր Մամադովին: 6,5 միավորով 12-րդ տեղը գրավեց Կարեն Ղարիբյանը, 6-ական միավոր վաստակեցին Դավիթ Շահինյանը, Հովիկ Հայրապետյանն ու Արման Միքայելյանը:

Մինչեւ 8 տարեկան տղաների մրցաշարում հայերից լավագույնը Գոռ Գրիգորյանի արդյունքն է: Նա 6 միավորով գավեթ 5-րդ տեղը: Մինչեւ 10 տարեկան աղջիկների մրցաշարում Մարիամ Բաբայանը 5,5 միավորով գրավեց 7-րդ տեղը:

Տիգրան Սիմոնյանը հանգրվանեց 23-րդ տեղում

Հունաստանի Ռեթիմնո քաղաքում վերջնագիծը հասել շախմատի միջազգային մրցաշարը, որի 186 մասնակիցների թվում էր Տիգրան Սիմոնյանը: Ավարտական՝ 9-րդ տուրում հաղթելով Դիմիտրիոս Բալոկասին, Սիմոնյանը վաստակած 6 միավորով զբաղեցրեց 23-րդ տեղը: Հայ շախմատիստը 9 պարտիաներից 4-ում հաղթեց, 4-ն ավարտեց ոչ-ոքի, կրեց մեկ պարտություն: 7-րդ տուրում Նիկոլաս Թեոդորոուից կրած այդ միակ պարտությունն էլ Տիգրանին զրկեց մրցանակակիր դառնալու հնարավորությունից:

Ստացվեց այնպես, որ միանգամից 10 շախմատիստներ վաստակեցին առավելագույն՝ 7-ական միավոր: Ավարտական տուրում 4 առաջատարները՝ Յուրի Կրիվոռուչկոն եւ Մոմչիլ Նիկոլովը, Մարին Բոսիոցիչն ու Խրիստոս Բանիկասը հաշտություն կնքեցին, ինչը հնարավորություն ընձեռեց 6 շախմատիստների հաղթանակներ տոնելով, միավորներով հավասարվելու նրանց:

Մրցանակակիրներին որոշելու համար հարկ եղավ դիմել լրացուցիչ գործակիցների աղյուսակին: Հաջողությունն ուղեկցեց ուկրաինացի գրոսմայստեր Յուրի Կրիվոռուչկոյին, որը դարձավ մրցաշարի հաղթող: 2-րդ տեղը գրավեց հունգարացի Պետեր Պրոխազկան, լավագույն եռյակը եզրափակեց Դմիտրի Սվետուշկինը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Հոկտեմբեր

Բարեբախտաբար Արմեն Սարգսյանը միակը չէ

Արդեն ամբողջ յոթ տարի է, ինչ «Ամարաս» հրատարակչության տնօրեն Արկադի Ասրյանը սկզբում «Կիլիկիա»-ի, իսկ հիմա էլ «Արմենիա»-ի անձնակազմի թերեւս ամենաեռանդուն ու գործուն պատվավոր անդամն է: Եվ հարցը բոլորովին էլ այն չէ, որ հենց «Ամարաս»-ում են հրատարակվել «Կիլիկիա»-ի բոլոր երեք հատորները, այլ այն, որ նավարկության ընթացքում նա կանոնավոր կերպով ուղարկել եւ ուղարկում է ինձ տեղեկատվություն, որից մենք զրկված ենք նավի վրա: Ահա հիմա էլ Արիկն իմ սեղանին դրեց ընդարձակ մի տեքստի վերատպություն, որը վերնագրված է «Հայկական օրը թագավորական էսկոտում»: Իսկույն մտովի վերադարձա 2006 թվականի մայիս, երբ նախապատրաստվելով «Կիլիկիա»-ի ոդիսականի երրորդ` ավարտական փուլի մեկնարկին, մենք դեպի Լոնդոն լողացինք եւ ապա հետ՝ Թեմզայով ու Լա Մանշով, դեպի Հյուսիսային եւ Բալթիկ ծովեր, մինչեւ Ֆիննական ծոց, որտեղից մուտք է բացվում Ռուսաստանի ներքին ջրուղիներ եւ որոնցով ես Կամչատկայի իմ ընկերներ Անատոլի Գավրիլինի եւ Անատոլի Սալնիկովի հետ 1967 եւ 1970 թվականներին լողացինք «Վուլկան» եւ «Հեյզեր» ինքնաշեն նավակներով: Այստեղ ես չեմ կարող չդիմել ավանդական քնարական շեղման, սկսելով «ի դեպ» բառից: Ի դեպ, բանն այն է, որ մի ժամանակ բազմաթիվ գեղերի մեջ Թեմզան իմ երազանքն էր: Ահա թե ինչ է գրված բառացիորեն օրերս լույս տեսած երկերի ժողովածուի չորրորդ հատորում, որը նվիրված է 60-ական, 70-ական եւ 80-ական թվականներին իմ կատարած ճամփորդություններին: «Կամչատսկայա պրավդա» թերթում տեղեկատվություն տպագրվեց Արեւմտյան Եվրոպայի գետերով մինչեւ Լոնդոն նախապատրաստվելիք արշավի մասին: Երթուղին կոչվում է «Խաղաղ օվկիանոսից մինչեւ Ատլանտյան օվկիանոս՝ ջրերով, մայրցամաքի վրայով»: Վոլգա, Դնեպր, Դանուբ, Էլբա, Սոնա, Սենա, Լա Մանշ, Թեմզա, Լոնդոն: Մեկնարկը՝ 1967 թվականի հուլիսի 15-ին»: Այն մասին, թե ինչ եղավ հետո, կարելի է կարդալ «Երկնագույն ճանապարհներ» գրքում, որը հայերեն լույս տեսավ 70-ականների սկզբին:

Այնպես որ, համատարած հիշողություններ են: Որեւէ գեղի կամ ծովի անուն ես լսում եւ իսկույն ընկնում հուշերի գիրկը: Իսկ այստեղ կարծես թե ո՛չ գեղ կա, ո՛չ ծով, այլ էսկոտ բնակավայրը, որտեղ արդեն երեք հարյուր տարի անցկացվում է թագավորական ձիարշավ՝ Անգլիայի թագավորի կամ թագուհու ներկայությամբ: Կհարցնեք՝ իսկ ի՞նչ կապ ունի Թեմզան: Բանն այն է, որ այն տարի հենց Թեմզայի վրա (Լոնդոնի կենտրոնում) կանգնած էր «Կիլիկիա»-ն, որին այցելեցին հայտնի գործարար Վաչե Մանուկյանը եւ, նշենք վարած գլխավոր պաշտոնը, Հայաստանի նախկին վարչապետ Արմեն Սարգսյանը: Երկուսն էլ այն ժամանակ նավի վրա իրենց ստորագրությունները դրեցին Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան ապագա (հիմա՝ արդեն իրականացվող) շուրջերկրյա նավարկության երթուղու քարտեզի տակ: Քարտեզն առաջինը ստորագրել էր պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը դեռեւս մեկ տարի առաջ, Ջիբրալթարում: Սակայն դա այլ պատմություն է: Կգա ժամը, դրան էլ կանդրադառնանք: Հիմա այլ հուշերի մասին է խոսքը:

Այն ժամանակ, հինգ տարի առաջ, ինչպես ինձ թվաց, ամբողջ Լոնդոնը խոսում էր մեկ ամիս անց էսկոտում տեղի ունենալիք թագավորական ձիարշավի մասին, որը նվիրված էր Աննա թագուհու ներկայությամբ առաջին ձիամրցման 295-ամյակին: Սակայն դեռ այն ժամանակ հրապարակումներում հաճախ էր աչքի զարնվում 300 կլոր թիվը: Եվ ահա, այդ տարեթիվն էլ հասավ: Եվ ողջ Անգլիան ապրում ու շնչում է անցյալի եւ հեռավոր նախնիների մասին հիշողություններով: Պարզվում է, միայն այսպես կարելի է գործուն կերպով մտածել ապագայի եւ սերունդների մասին:

Եվ ահա այդ ավանդական համազգային տոնի ժամանակ անցկացվում է «Հայկական օր», երբ «Երեւան՝ իմ սեր» նախագծի խոշորագույն բարեգործներն ու հովանավորները դարձան Արմեն եւ Նուբե Սարգսյաններ ամուսնական զույգի անձնական հյուրերը: Եվ դա տեղի է ունենում հունիսի 14-ին էսկոտում թագավորական ձիարշավի բացման արարողությանը: Ես չեմ ուզում կանգ առնել մանրամասների վրա, բանզի համոզված եմ, որ ծավալուն տեղեկատվությունը հասաս տրվել է մեր երկրի զանգվածային լրատվամիջոցներով: Իմ նպատակն այլ է: Ահա կարդում եմ, որ Արմեն Սարգսյանը Նորին մեծություն թագուհու հետ ընդունել է ավելի քան 250 հյուրերի ողջ աշխարհից, իսկ ինքս մտածում եմ 1996 թվականի վերջին Արմենի հետ Լոնդոնում ունեցած մեր հանդիպման մասին: Լորդերի պալատի երկորդ խոսնակ, բարոնուհի Քերոլայն Քոքսը հերթական կոնֆերանսն էր կազմակերպել՝ նվիրված Ղարաբաղի իրավիճակին, եւ ես թռա Լոնդոն: Այն ժամանակ ողջ Հայաստանը գիտեր, որ նախկին վարչապետը եւ Մեծ Բրիտանիայում Հայաստանի դեսպանը ծանր հիվանդ է: Ախտորոշումը... այն նույնը, որի ճակատագրականությունից սարսռում ես: Չէի կարող չայցելել Արմենին: Սարգսյանների տանն այն ժամանակ ես տեսա ամեն ինչ. ե՛ւ տագնապը Նունեի աչքերում, որն ամուսնուն էր փոխարինում որպես դեսպան, ե՛ւ անթափույց վախը նրանց պատանի զավակների աչքերում: Ես տեսա չափազանց հյուծված Արմենին՝ հողագույն դեմքով: Նա հազիվ էր շարժվում: Հիմնականում ժամանակն անց էր կացնում բազկաթոռում, տաք, փափուկ ծածկոցով փաթաթված: Բայց ահա նրա աչքերում ես փայլ տեսա: Հույսի ցոլքը: Ախտորոշում-դատավճռի մեջ չէին սխալվել: Հայտնի բժիշկները նրա համար արել էին ամենը, ինչ սովորաբար բոլորի հետ անում են: Ամեն ինչ այնպես էր, ինչպես շատ ուրիշների մոտ. ե՛ւ հյուծումը, ե՛ւ գունատությունը, ե՛ւ մազաթափությունը: Ամեն ինչ: Բայց պահպանվել էր աչքերի փայլը: Դա ինքնահաղթահարման հայելու արտացոլանքն էր, ատելությունը՝ հուսալքության եւ քամահրանքը՝ մահվան հանդեպ: Եվ վերջապես, դա լույսն էր կամքի:

Լոնդոնից վերադառնալուց հետո ես այդ ամենի մասին պատմեցի «Ուրարտու» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր, անմոռանալի Իոսիֆ Վերդյանին, որը պատրաստ պնդեց, որ Լոնդոնի ղարաբաղյան կոնֆերանսի մասին իմ շարադրանքում անպայման դրվագ մտցնեմ Արմենի մասին: Ես գտնում էի, որ անհարմար է, ճիշտ չէ այդպես վարվել, երբ մարդն այդպիսի ծանր վիճակում է: Բայց Իոսիֆն այլ կերպ էր դատում եւ ինձ համոզեց: Նյութը լույս տեսավ:

Եվ Արմենը խոստովանեց, որ ավելի շատ հավատաց ինքն իրեն:

Հատկանշական է, որ Արկադին վերատպությունն ինձ նավ ուղարկեց ճիշտ այն օրը, երբ «Լիտերատուրնայա գազետա» թերթի հունիսի 29-ի համարում տպագրվեց հերթական ռեպորտաժը «Արմենիա»-ի նավարկության մասին: Նյութը վերնագրված էր «Հաղթել ինքդ քեզ»: Եվ ամբողջովին այն մասին է, որ այսօր, երբ ողջ աշխարհի վրա «ոգու սովի» սպառնալիք է կախված, պետք է կենդանի օրինակներով պատմել այն մարդկանց մասին, որոնք ոգու ուժով, ամուր կամքով, ազնիվ գաղափարով ու բարձր նպատակով թեւավորված հաղթում են իրենք իրենց՝ հանուն դրանց իրագործման: Եվ բազմաթիվ օրինակների մեջ նշել էի նաեւ մեր ընթերցողին արդեն հայտնի լեգենդար ծովագնաց Ֆրենսիս Չիչեստերի մասին, որը բազմիցս երկարաձգեց ախտորոշում-դատավճռի իրականացման ժամկետը, դրանով իսկ հաղթելով ու հաղթահարելով ինքն իրեն: Ռեկորդային շուրջերկրյա նավարկության ավարտին թերթերը գրեցին, թե տեսել են տանջահար ու հյուծված մի ծերունու, որն օրորվում էր մշտական գլխապտույտից, շնչապառ լինում ասթմայի նոպայից: Գրողը տանի, հավանաբար այդպես էլ կար: Բայց ահա այդ օրը ինքը՝ Չիչեստերը այլ բան է ասել իր մասին: Ասել է նույնիսկ ոչ իր, այլ բոլորի մասին. «Ես գտնում եմ, որ հիվանդությունների մեծ մասի պատճառը, բացի ծաղկից, ժանտախտից եւ այլ սուր-վարակիչ հիվանդություններից, թաքնված է ընկճվածության եւ առաջին հերթին՝ հուզական ճնշվածության մեջ: Ասում են՝ ձեռքի ափի գծերով կարելի է որոշել ճակատագիրը: Իսկ այ, իմաստունն ասում է, որ կամքն ունակ է փոխել նույնիսկ ափի գծերը»:

Ողջ համաշխարհային գրականությունը հիմնված է կյանքից վերցրած օրինակների վրա, իսկ Աստվածաշնչի բոլոր դասերը՝ օրինակների, առակների, որոնք նույնպես կենդանի օրինակներ են: Քանզի օրինակն ավելի ուժգին է ներգործում, քան քարոզը եւ կամ սպառնալիքը: Ես ողջ կյանքում, լավ իմաստով, հավատում եմ այդ օրինակները: Եվ ուրախ եմ, որ նրանց մեջ կան նաեւ մեր հայրենակիցները: Բարեբախտաբար, Արմեն Սարգսյանը միակը չէ:

...Համա թե բախտներս բերեց: Ես արդեն պատմել եմ, թե ինչպես Ցեյլոնում գտանք...հայուհու՝ Սվետլանա Արտաշեսի Ատամանյանին: Ամուսնական ազգանունը՝ Սերգիենկո: Ծնվել է Ղրիմում: Ոչ թե Ղրիմ թերակղզում, այլ Ռոստովի մարզի Չալտիրի շրջանի հայկական գյուղում: Մինչեւ դպրոց գնալը ռուսերեն ոչ մի բառ չգիտեր: Տանը խոսում էին միայն հայերեն: Դեռ փոքրիկ աղջիկ էր, երբ երդումպատառ էր ուտում, թե ամուսնանալու է միայն հայի հետ: Եվ որ իր ապագա ամուսինը կա՛մ իր Ղրիմից է լինելու, կա՛մ էլ Ղրիմ թերակղզուց: Դա արդեն երկուսով գնացին հայկական եկեղեցի՝ Աստծուն շնորհակալություն հայտնելու: Փեսան ավարտեց Մոսկվայի Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը, դարձավ դիվանագետ: Մի քանի տարի անցկացրին Բուլղարիայում: Եվ ահա՝ Շրի Լանկա:

Չգիտեմ, որքանով բերեց Սվետլանայի մոր՝ տիկին Վարդուհու բախտը, բայց «Արմենիա»-ի անձնակազմինը նույնիսկ հիանալի բերեց մեր փեսայի առումով: Նախքան նրա հետ հանդիպելը շատ ծանր էինք տանում պարեսային ժամի հետ կապված այդ քաշքշուկը: Իսկ հիմա, մեկ էլ տեսար, հնարավոր է այդ չարաբաստիկ պոմպերն էլ ճարենք եւ այն ամենը, ինչ հարկավոր է օվկիանոսի այդ ամենապատասխանատու հատված դուրս գալու համար: Իսկ մեզ ծանոթացրեց, եւս մեկ անգամ հիշենք, ռուս մեծ գրող Անտոն Պավլովիչ Չեխովը: Առանց հոգնելու ես անընդհատ կրկնում եմ, որ ամենասկզբից էլ միանգամից երկու կուռք եմ ունեցել. Անտոն Պավլովիչ Չեխովը (ինչքան չլինի, բժիշկ էր) եւ Ձեկ Լոնդոնը (ինչքան չլինի՝ եւ՛ ծովային, եւ՛ շնասահնակներով ճամփորդող բեւեռագնաց): Այնպես որ, Չեխովի մասին ճամփորդական ակնարկս արդեն պատրաստ է: Մնացել է ինչ-որ բաներ լրացնել եւ ուղարկել էլեկտրոնային փոստով: Ակնարկի վրա ես աշխատել եմ «Գրանդ Օրիենտալ օթել» հյուրանոցի այն սենյակում, որտեղ հարյուր քսանմեկ տարի առաջ կանգ է առել Անտոն Պավլովիչ Չեխովը Սախալինից տունդարձի ճանապարհին:

ՁՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
Հնդկական օվկիանոս

Գոհաբանական աղոթք «Արմենիա» նավի համար

«Արմենիա» առագաստանավն իր առաջին շուրջերկրյա նավարկության վերջին փուլում հանգրվանեց Շրի Լանկայի Գոլլ քաղաքի նավահանգստում, որը գտնվում է մայրաքաղաք Կոլոմբոյից 115 կմ հեռավորության վրա՝ կղզու հարավարեւմտյան մասում: Այն իր շուրջերկրյա նավարկությունն սկսել էր 2009 թվականին՝ անցնելով սփյուռքի ճամփաներով:

2011 թվականի հուլիսի 18-ին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ եւ գրող-հրապարակախոս Զորի Բալայանի հրավերով Շրի Լանկայի մայրաքաղաք Կոլոմբո մեկնեց հնդկահայոց հոգեւոր հովիվ, Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Խորեն վարդապետ Հովհաննիսյանը՝ գոհաբանական աղոթք վերառաքելու Բարձրյալին՝ «Արմենիա» առագաստանավի խաղաղ նավարկության եւ անձնակազմին օրհնելու համար:

Հանդիսավոր արարողությանը մասնակցում էր Հնդկաստանում ՀՀ դեսպան Արա Հակոբյանը:

Գոհաբանական աղոթքից հետո հայր Խորենն իր խոսքում փառք եւ գոհություն առաքեց Երկնավորին, որ «Արմենիա» խաղաղ եւ աղահով իրականացրեց իր առաքելությունը եւ բարեհաջող կառանեց Շրի Լանկայում: Հնդկահայոց հոգեւոր հովվության անունից ողջունեց եւ գնահատանքի խոսք ասաց անձնակազմին՝ մաղթելով առագաստանավին անվտանգ նավարկություն դեպի Ալեքսանդրիա, Եգիպտոս:

Ռիելտոր «Ֆլորես» Ասուրդի Տուն ՍՊԸ-ն «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝
- Ճաշարան, ընդ. մակերեսը՝ 274.4 քմ, հողամասը՝ 0,109 հա: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Աջափնյակ հատ., Գ. Չարուխի փ. 2/1: Մեկնարկային գինը՝ 140000000 ՀՀ դրամ:
- Արտադրական շենք, ընդ. մակերեսը՝ 1498.0 քմ, հողամասը՝ 0,655 հա: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Շենգավիթ հատ., Արշակունյաց պող. հ. 127/15: Մեկնարկային գինը՝ 92000000 ՀՀ դրամ:
- Բնակարան, ընդ. մակերեսը՝ 75.2 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Աջափնյակ հատ., 16 թաղ., 33 շ. 26 բն.: Մեկնարկային գինը՝ 14000000 դրամ:
Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 22.08.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ. ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել www.akson.am:

ԳՈՎԱԶՊԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 19.7.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: